

ԻՐԱՆԻ
ԽԱՆՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
(ՀԱՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՔ)



Թարգմանեց՝
ԳԱՌՆԻԿ ԲԱԴԱԼՅԱՆԸ

-ՆԱԻՐԻ- ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ԹԵՀՐԱՆ
2005

344

Կ-89

**ԻՐԱՆԻ
ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
(ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՔ)**

**ԹԱՐԳՄԱՆԵՑ՝ ԳԱՌՆԻԿ ԲԱԴԱԼՅԱՆԸ
(Ոչ պաշտոնական թարգմանություն)**



«ՆԱԻՐԻ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ԹԵՀՐԱՆ
2005

ایران- قانون اساسی (جمهوری اسلامی).

قانون اساسی جمهوری اسلامی ایران / مترجم گارنیک بدلیان. —

تهران : نائیری ، ۱۳۸۴ .

ص. ۱۲۵

ISBN-964-6479-76-6

ص.ج. به ارمنی

ارمنی.

فهرستویسی براساس اطلاعات قبا.

۱. ایران — قانون اساسی (جمهوری اسلامی). الف. بدلیان. گارنیک .

۱۳۱۹ — مترجم. ب. عنوان.

۳۳۲/۵۵۰۲۳

КМН ۲۰۶۴/۱۳۶۸

۱۳۸۴ ب

۸۴ — ۱۱۴۸۴

کتابخانه ملی ایران

ԻՐԱՆԻ ԻՆՍՏԻՏԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆԵՐ
Թարգմանեց՝ ԳԱՌՆԻԿ ԲԵԴԼԻԱՆԸ
իրատարարություն՝ «ԼԱՅՆԻՐ» թեմիան

Published in Iran
by NAIRI PUBLISHING
1020 ENGHELAB AVE.
TEHRAN 1133934314-IRAN
Tel: 6707578-6727770
Fax: 6729363

Email: nairi_publishing_press@yahoo.com

نام کتاب : قانون اساسی جمهوری اسلامی ایران (بزبان ارمنی)

مترجم : گارنیک بدلیان

ناشر : انتشارات نائیری-تهران

نوبت چاپ : اول ۱۳۸۴

تیراژ : ۱۵۰۰ نسخه

چاپ : جامع

صحافی : سپیدار

شابک : ۹۶۴-۶۴۷۹-۷۶-۶

ISBN-964-6479-76-6

Առաջին անգամ հայ ընթերցողին է ներկայացվում «Իրանի Իսլամական Հանրապետության Սահմանադրության» հայերեն ոչ պաշտոնական թարգմանությունը, որը կատարել է Իրանի Իսլամական Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության դեսպանության արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար Գառնիկ Բադալյանը:

Իրանն առաջին երկրների շարքում էր, որ 1992 թ.-ին պաշտոնապես ճանաչեց Հայաստանի անկախությունն և դիվանագիտական հարաբերություններ հաստատեց նրա հետ: Բարեբախտաբար այսօր հայ-իրանական հարաբերությունները զտնվում են մի հանգըրվանում, որ կարիք է զգացվում ամրապնդել քաղաքական, առևտրատնտեսական, գիտատեխնիկական և կրթամշակութային կապերը, խորապես ուսումնասիրելով նաև երկու երկրների սահմանադրություններն ու օրենսդրությունը:

Իրանի Իսլամական Հանրապետության Սահմանադրությունը կարող է օգտակար լինել

թե՛ իրավագիտության և իրանագիտության բաժիններում սովորող ուսանողության, թե՛ Իրանի հետ գործարար կապեր ունեցողների և թե՛ պետական ծառայողների, ինչպես նաև բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրված են բարեկամ Իրանով:

Սա առաջին փորձն է, ուստի հնարավոր են վրիպումներ, մասնագիտական որոշ տերմինների ոչ համապատասխանություններ, սակայն ոչ պաշտոնական թարգմանությունը նպատակ է հետապնդում ընթերցողին ներկայացնելու Իրանի հիմնական օրենքը՝ միմյանց ավելի լավ ճանաչելու համար:

«Նաիրի»
հրատարակչություն

Թարգմանչի կողմից

**ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱՀԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵՐԿՐԻ
ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Իրանի պետականության համար 20-րդ դարում տեղի են ունեցել երկու կարևորագույն և ճակատագրական իրադարձություններ՝ 1905-1911 թթ. սահմանադրական և 1978-1979 թթ. իսլամական հեղափոխությունները:

1905-1911 թթ. սահմանադրական հեղափոխության արդյունքում Իրանը դարձավ խորհրդարանական միապետություն, ընդունվեց երկրի առաջին Սահմանադրությունը, որը բաժանված էր երկու մասից՝ հիմնական օրենքից (1906թ. դեկտեմբեր) և հիմնական օրենքի լրացումներից (1907թ. հոկտեմբեր):

<Հիմնական օրենքն ուներ 5 բաժին՝ 51 հոդված, խորհրդարանի (մեջլիս) կառուցվածքի, մեջլիսի պարտականությունների, իրավունքների և լիազորությունների, մեջլիսում առաջարկներ մտցնելու կարգի և մեջլիսի կողմից առաջարկություններ անելու կարգի և սենատի կազմավորման կարգի մասին:

<Հիմնական օրենքի լրացումներում ամենակարևոր բաժինը Սահմանադրությունն էր: Այն բաղկացած էր 10 բաժնից՝ 107 հոդված,

ընդհանուր որոշումներ, Իրանի ժողովրդի իրավունքը, մեջլիսի և սենատի անդամների իրավունքները, Իրանի միապետի իրավունքները, նախարարների մասին, դատական իշխանության մասին, նահանգային և գավառական էնջումենտների իրավունքները, ֆինանսների և բանակի մասին:

Հետագայում 1907-1979թթ. երկրի Սահմանադրության մեջ իրականացվել են չնչին լրացումներ ու փոփոխություններ: Հիմնական լրացումները կատարվել են 1925թ. Ղաջարական արքայատոհմի վերացման և Ռեզա խան Փահլավիի ժառանգական հաջորդականության սկզբունքի անցնելու մասին հայտարարության վերաբերյալ:

1949թ. փոփոխություններով Սահմանդիր ժողովը ընդարձակեց շահի՝ որպես երկրի ղեկավարի իրավասությունների շրջանակը: 1957թ. փոփոխությամբ շահին տրվեց առանձին վետո դնելու իրավունք:

1967թ. փոփոխությամբ շահը ստացավ բացառիկ իրավունք իր հաջորդին նշանակելու համար:

Միապետական վարչակարգի Սահմանադրությունը փաստորեն կրում էր ձևական բնույթ, չէին պահպանվում տարրական իրավունքներն ու ժողովրդավարական սկզբունք-

ները: 1970-ական թվականների վերջերին սկսված ժողովրդական շարժման գլուխ անցած հոգևորականությանը հաջողվեց 1979թ. փետրվարի 11-ին իրականացնել իսլամական հեղափոխություն և տապալել շահի վարչակարգը:

1979 թ. հունիսին նոր իշխանությունները հրապարակեցին Իրանի նոր Սահմանադրության նախագիծը: Հոգևորական բարձրաստիճան խավը ընդվզեց դրա դեմ, քանի որ նախատեսում էր ստեղծել նախագահական ուժեղ պետություն: Այդ պայմաններում 1979թ. օգոստոսի 3-ին՝ այաթոլլահ Խոմեյնիի Լարգադրությամբ անցկացվեցին բանիմացների օրհրդի ընտրությունները, որն էլ ղեկտեմբերին տեղի ունեցած հանրաքվեի միջոցով հաստատեց ներկայիս Սահմանադրությունը: ԻՒՀ Սահմանադրությունը համարվում է պաշտոնական փաստաթուղթ, որը գործում է 1979թ. ղեկտեմբեր ամսից: 1989թ. հուլիսի 28-ի հանրաքվեով Սահմանադրության մեջ տեղի են ունեցել մասնակի փոփոխություններ: Այն կազմված է ընդարձակ նախաբանից, որտեղ ներկայացվում է Իրանի հեղափոխական անցյալը, պարզաբանվում Իսլամական Հանրապետություն հասկացողությունը և նրա մոտեցումները մի շարք հարցերի նկատմամբ:

Սահմանադրության հիմնական տեքստը բաղկացած է 14 բաժնից՝ 177 հոդված: Դրանցում արտացոլված են՝ պետականության մասին ընդհանուր դրույթներ, պետական իշխանության ինստիտուտները, ժողովրդի իրավունքը, տնտեսությունը, ֆինանսները, ազգային ինքնավարության իրավունքները, օրենսդիր իշխանությունը, գործադիր իշխանությունը, երկրի առաջնորդը, դատական իշխանությունները, արտաքին քաղաքականությունը, զանգվածային լրատվամիջոցները, ազգային անվտանգության բարձրագույն մարմինը և հիմնական օրենքում փոփոխություններ և լրացումներ անելու կարգը:

ԻԻՀ Սահմանադրությունը առաջին անգամ է ամբողջապես տպագրվում հայերեն լեզվով:

Գառնիկ Բադալյան

ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Իրանի Իսլամական Հանրապետության Սահմանադրությունը (Հիմնական օրենք) վերջնականապես հաստատվել է 1358 թ. աբանի 24-ին: Սահմանադրական ժողովի նիստում՝ անդամների երկու երրորդի ձայների մեծամասնությամբ:

Չնայած ժողովրդի կողմից ընտրված Սահմանադրական ժողովի փորձագետները առավելագույն ջանքեր գործադրեցին, որպեսզի ընդունվի մի հիմնարար և համապարփակ օրենք, դրանով հանդերձ տաս տարի անց խիստ անհրաժեշտություն զգացվեց վերանայել նրա որոշ հոդվածների դրույթները: Այդ նպատակի համար Իսլամական Հեղափոխության մեծ առաջնորդ և Իրանի Իսլամական Հանրապետության հիմնադիր մեծ այաթոլլահ իմամ Խոմեյնին (թող նրա հետ լինի Ալլահի ողորմությունը) 1368թ. օրդիբեհեշթի 4-ին (1989թ. ապրիլի 24) հրամանագիր արձակեց ԻԻՀ Սահմանադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին: Այդ իսկ հրամանագրով, այդ աշխատանքը հանձնարարվեց 20 փորձագետների և Մեջլիս ընտրված 5 պատգամավորների:

Սահմանադրության վերանայման խորհուրդը կատարելով իմամ Խոմեյնիի (թող նրա հետ լինի Ալլահի ողորմությունը) հրամանագիրը, անցկացրեց 38 լիազուստ նիստ և խորհրդի 1368թ. թիվ 17-ի և 20-ի (1989թ. հուլիսի 8-ի և 11-ի) նիստերի ժամանակ, ինչպես նաև վերջնական 41-րդ նիստի ժամանակ, փոփոխություններ մտցրեց նախաբանում, հոդվածների վերնագրերում և հետևյալ 48 հոդվածների՝ 5, 57, 60, 64, 69, 70, 85, 87, 88, 89, 91, 99, 107, 108, 109, 110, 111, 112, 113, 121, 122, 124, 126, 127, 128, 130, 131, 132, 133, 134, 135, 136, 137, 138, 140, 141, 142, 157, 158, 160, 161, 162, 164, 173, 174, 175, 176, 177, բովանդակության մեջ :

Ի՞նչ Սահմանադրության տվյալ տեքստը ներառում է Սահմանադրության վերանայման խորհրդի կողմից արված փոփոխություններն ու լրացումները:

Սահմանադրության վերանայման խորհրդի քարտուղարություն

ՆԱԽԱԲԱՆ

Իրանի Իսլամական Հանրապետության Սահմանադրությունը կոչված է կարգավորելու Իրանի հասարակության մշակութային, սոցիալական, քաղաքական և տնտեսական կառույցների գործունեությունը՝ իսլամական հիմնարար սկզբունքների և նորմերի հիման վրա, ինչն արտահայտում է իսլամական համայնքի ուսմայի իղծերը:

Իրանի իսլամական հեղափոխության էությունը և մահմեդական ժողովրդի պայքարի գործընթացը ի սկզբանե և մինչև դրա վերջնական հաղթանակը արտահայտված է ժողովրդի լայն զանգվածների վճռական և ազդու կարգախոսների մեջ, հստակեցրել է այդ հիմնական ցանկությունը և ներկայումս այդ մեծ հաղթանակի շնորհիվ մեր ժողովուրդն իր ամբողջ էությամբ ձգտում է հասնել դրան:

Այս հեղափոխության հիմնական առանձնահատկությունը, ի տարբերություն վերջին հարյուրամյակում տեղի ունեցած իրանական շարժումների, դրա գաղափարաբանության և իսլամականության մեջ է:

Հակամիապետական սահմանադրական շարժման և նավթի ազգայնացման հակազգալուծարարական շարժման բովն անցած Իրանի

մահմեդական ժողովուրդը հանգեց այն արժեքավոր եզրակացությանը, որ այս շարժումների անհաջողությունների հիմնական պատճառը մղված պայքարում գաղափարախոսության բացակայությունն էր: Թեև վերջին հեղափոխական շարժումների շարժիչ ուժը հանդիսանում էին իսլամը և մարտնչող հոգևորականությունը, սակայն ժամանակի ընթացքում իսլամի հիմնարար սկզբունքներից հեռանալու հետևանքով, այդ շարժումները արագորեն դատապարտվեցին լճացման: Այդ իսկ պատճառով, ժողովրդի զգոն խիղճը, իման խոմեյնիի գլխավորությամբ, զգաց իսկական գաղափարական և իսլամական շարժմանը հետամուտ լինելու անհրաժեշտությունը և այս անգամ բոլոր ժողովրդական շարժումների առաջին շարքերում գտնվող երկրի մարտնչող հոգևորականությունը, ինչպես նաև կրոնապետությանը հավատարիմ մտավորականները և գործիչները սկիզբ դրեցին նոր շարժման: (Իրանի ժողովրդի վերջին շարժման սկիզբը դրվեց 1341 թվականին (1962 թ.):

ՇԱՐՇՄԱՆ ԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Իրանի միապետական կարգերի կայունացմանը և համաշխարհային իմպերիալիզմից Իրանի քաղաքական, մշակութային և տնտեսական կախվածության ամրապնդմանը միտված ԱՄՆ-ի խարդավանքը հանդիսացող «Սպիտակ հեղափոխության» դեմ իման խոմեյնիի ազդու բողոքը դարձավ ազգի համախմբված շարժման գործոնը, և ի հետևանս դրան՝ 1342 թվականի խորդադ ամսին տեղի ունեցած իսլամական ազգի մեծ ու արյունալի հեղափոխությունը, որը վիաստորեն հանդիսանում էր այս պանծալի ու լայնածավալ շարժման ծաղկման սկիզբը, կայունացրեց և ամրապնդեց իմամի դերը որպես իսլամական առաջնորդի: Եվ հակառակ Իրանից իմամի արտրվելու փաստին, նվաստացուցիչ կապիտուլյացիոն օրենքի դեմ արտահայտված խոմեյնիի բողոքի հետևանքով, շարունակվեց իմամի ու ժողովրդի երբեմնի ամուր կապը, և մահմեդական ազգը՝ հատկապես նվիրյալ մտավորականներում մարտնչող հոգևորականները, արքայի, բանտարկության, կտտանքների և ֆիզիկական ոչնչացման պայմաններում շարունակեցին իրենց գործը:

Հասարակության զգոն և պատասխանատու զանգվածները այստեղ մզկիթների, կրոնագիտական կենտրոնների և համալսարանների խրամատներում, սկսեցին լուսաբանել ժողովրդին, և ներշնչվելով իսլամի հեղափոխական ու բեղմնավոր ուսմունքից՝ մահմեդական ազգի գիտակցության, գաղափարական և հեղափոխական զգոնության մակարդակի բարձրացման ուղղությամբ արդյունավետ աշխատանքներ ծավալեցին: Իսլամական շարժումը տապալելու մտադրությամբ երկրի կրոնագիտական և հեղափոխական կենտրոնների նկատմամբ դաժանագույն հալածանքների դիմած միապետական վարչակարգը ձեռնամուխ եղավ դիվային քայլերի՝ ժողովրդի հեղափոխական ցասմանն ընդդիմանալու նպատակով: Այս ընթացքում ֆիզիկական հաշվեհարդարը, միջնադարյան հալածանքները և երկարատև ազատագրկունները մահմեդական ժողովրդի վճարած գինն էր պայքարը շարունակելու համար դրսևորած իր անկոտրում կամքի դիմաց: Լուսաբացեցին զնդակոծվող հրապարակներում «Ալլահ օ Աբբար» վանկարկող և փողոցներում թշնամու գնդակների թիրախը դարձած հարյուրավոր երիտասարդ ու հավատացյալ կանանց և տղամարդկանց արյունը կենսունակություն պարզևեց Իրանի Իսլամական Հեղափոխության:

նը: Իսկ Իմամի՝ տարբեր առիթներով հնչած մեկը մյուսին հաջորդող կոչերն ու ուղերձները էլ ավելի բարձրացրեցին մահմեդական ժողովրդի գիտակցության մակարդակն ու ամրապնդեցին նրա կամքը:

ԻՍԼԱՄԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Միապետական վարչակարգի բռնատիրության ամենադաժան օրերին իմամ Խոմենիի ներկայացրած՝ կրոնապետության հիմքով իսլամական իշխանության գաղափարը, մահմեդական ժողովրդի մոտ առաջ բերեց հստակ և նոր պատկերացում հարթելով իսլամի գաղափարաբանական պայքարի ուղին, ի մի բերելով երկրի ներսում և արտերկրում ապրող մահմեդական և նվիրյալ մարտիկների ջանքերը: Շարժումը շարունակվեց այդ ուղիով: Ի վերջո, քաղաքական ազատությունները խեղդելու դեմ երկրի ներսում ժողովրդի անհանդուրժողականությունն ու ցասումը, վարչակարգի մութ գործերի բացահայտումը և ժողովրդական պայքարի անդրադարձը արտասահմանում պայքարող հոգևորականության նկատմամբ, հեղափոխականորեն տրամադրված ուսանու-

դուրսումը քայքայեց իշխող վարչակարգի հիմքերը, որը ստիպված էր բռնել ներքաղաքական լիբերալիզացիայի ուղին: Այսպիսով վարչակարգը ցանկանում էր բացել ծորակը՝ իր անխուսափելի անկումը կասեցնելու համար: Սակայն ոտքի կանգնած ժողովուրդը, վստահ իր նպատակներին, իմամ Խոմենյիի կարծր և աներեր ղեկավարությամբ կուռ շարքերով սկսեց համընդհանուր հաղթական ապստամբությունը:

ԺՈՂՈՎՐԴԻ ՑԱՍՈՒՄԸ

Երբ 1356թ. դեյ անսի 17-ին (1978թ. հունվարի 7) իշխող վարչակարգը կազմակերպեց իմամ Խոմենիին վարկաբեկող և վիրավորող նամակի հրապարակումը, ժողովրդական շարժումը այդ պայթյունի ազդեցության տակ նոր շունչ ստացավ: Իշխող վարչակարգը ցանկացավ պատժիչ գործողություններով մարել մարդկային ցասունի հրաբուխը: Սակայն դա հեղափոխությանը միայն նոր ուժ տվեց: Ամեն անգամ հեղափոխության նահատակների մահվան յոթերորդ օրվա և քառասունքի արարողություններն ամբողջ երկրով մեկ, նոր ուժ էին հաղորդում շարժմանը: Շարժումը շարունակվում էր: Շուտով հայտարարվեց համ-

ընդհանուր գործադուլ, որը փողոցային ցույցերի հետ մեկտեղ կարևոր դեր խաղաց միապետության տապալման գործում:

Հասարակության բոլոր խավերի, բոլոր կրոնական և քաղաքական շրջանակների լայնամասշտաբ համերաշխությունը դարձավ այդ պայքարի որոշիչ գործոնը: Հատկապես նկատելի էր կանանց մասնակցությունն այդ շարժմանը: Հաճախ կարելի էր տեսնել, թե ինչպես կինը, երեխան ձեռքին, վազում է վարչակարգի դեմ մարտի ճակատ, ուր իր վրա են ուղղված գնդացիրները: Այս բոլորը խոսում է հեղափոխական պայքարում կնոջ որոշիչ դերի մասին:

3427

ԺՈՂՈՎՐԴԻ ՎՃԱՐԱԾ ԳԻՆԸ

«Եղափոխության ծառը մեծացավ մեկ տարի հետո՝ ժողովրդի համառ պայքարի և 60 հազար նահատակների արյան, հարյուր հազարավոր վիրավորների և հաշմվածների, երկրի կրած միլիարդավոր թումանի վնասների գնով: Հեղափոխությունն ընթանում էր «Անկախություն, ազատություն, իլամական ղեկավարում» կոչով: Հավատի վրա հիմնված այդ մեծ շարժումը որոշիչ պահերին ղեկավարության միասնության

և վճռականության, ինչպես նաև ժողովրդի անձնագոհության շնորհիվ հաղթանակեց և կարողացավ ցաք ու ցրիվ անել իմպերիալիստների մտահոգումները, նրանց կապերն ու կառույցները: Այդ շարժումը նոր փուլ բացեց աշխարհի ժողովրդական հեղափոխությունների համար:

1357թ. Բահմանի 21-22-ին (10-11 փետրվարի 1979թ.) շահական վարչակարգն ընկավ, վերջ դրվեց ներքին բռնակալի իշխանությանն ու արտասահմանից նրա ղեկավարմանը: Այդ մեծ հաղթանակի շնորհիվ իսլամական ղեկավարման արևածագը ավետեց վերջնական հաղթանակի լուրը, մահմեդական ժողովրդի վաղեմի իղծը:

Իրանի ողջ ժողովուրդը, իսլամական հեղինակությունները (մարջա-էթալիի), ուլեմները և երկրի առաջնորդը Իսլամական Հանրապետության հանրաքվեում վճռականորեն և անշրջելի հանդես եկան նոր իսլամական հանրապետական կարգերի օգտին, որի համար տրվեց 98.2 % ձայն:

Ներկայումս Իրանի Իսլամական Հանրապետության Սահմանադրությունը՝ որպես քաղաքական, սոցիալական, մշակութային և տնտեսական կառույցների և հասարակական հարաբերությունների արտահայտիչ, պետք է

հանդիսանա իսլամական ղեկավարման հիմքը դառնալով նոր համակարգի օրինակը, որ առաջացավ խորտակված բռնատիրության ավերակների վրա:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳՆ ԻՍԼԱՄՈՒՄ

Իսլամի տեսանկյունից կառավարումը ձևավորվում է ոչ թե դասակարգային, անձնական կամ խմբակային շահերից ելնելով, այլ բխում է համակրոնակիցների, համախոհների և ժողովրդի իղծերից, որն ինքնակազմակերպվում է, որպեսզի հոգևոր և աշխարհայացքային էվոլյուցիայով հասնի վերջնական նպատակին՝ մոտենալ Աստծուն:

Հեղափոխական զարգացման ընթացքում մեր ժողովուրդն ազատվեց բռնակալ ռեժիմից և հասարակական մտքի վրա արտասահմանյան ազդեցություններից, վերադարձավ իսկական իսլամական աշխարհընկալմանը, իսկ այժմ մտադիր է ստեղծել իսլամական բարքերին համապատասխան իսլամական օրինակելի հասարակարգ: Այդ իսկ պատճառով Սահմանադրության դերը պետք է լինի հեղափոխական շարժման աշխարհայացքային հիմքերով և իսլամական համընդհանուր արժեքների ոգով

պայմաններ ստեղծել մարդու դաստիարակման համար:

Նկատի ունենալով Իրանի Իսլամական Հեղափոխության ուղղվածությունը՝ ընչազուրկների կողմից բռնակալների նկատմամբ հաղթանակը, Սահմանադրությունը պայմաններ է ստեղծում հեղափոխությունն իր սահմաններից դուրս շարունակելու համար և ջանում է մյուս ժողովրդական և իսլամական շարժումների հետ հարաբերությունները զարգացնելով՝ ճանապարհ գտնի՝ ստեղծելու միասնական համաշխարհային իսլամական ումմայի (ազգ) սեղծման («Իրականում ձեր այդ ժողովուրդը, միասնական ժողովուրդ է, և Ես, ձեր Աստվածը, դե խոնարհվեք ինձ» (Սուրահ Առաքյալներ, այաթ 92) համար և աջակցել ամբողջ աշխարհում ընչազուրկ ժողովուրդների փրկման գործին:

Հաշվի առնելով այդ մեծ շարժման իմաստը, Սահմանադրությունն երաշխավորում է տընտեսական մենաշնորհի, հոգևոր և սոցիալական դեսպոտի վերացումը և վերացնելով բռնատիրական համակարգը՝ ժողովրդի ձակատագիրը հանձնել՝ ժողովրդին: «...հանում է նրանց վրայից ծանր լուծը և բեռը, որ նրա վրա էին:» (Սուրահ Արգելքներ, այաթ 157)

Քաղաքական կառույցների ստեղծման ժամանակ, որոնք հասարակության հիմքն են,

օգտագործվում է համակարգը ղեկավարող պատասխանատու այրերի այդ հարցերի կրոնական մեկնաբանությունը «...հողը կտակվում է իմ հավատարիմ ստրուկներին:» (Սուրահ Առաքյալներ, այաթ 105)

Օրինաստեղծ աշխատանքը, որն արտացոլում է սոցիալական կառավարման սկզբունքները, գտնվում է Ղուրանի և Սուրնայի շրջանակներում: Ուստի անհրաժեշտ է, որ արդար և նվիրված իսլամական աստվածաբանները լուրջ և հետևողական հսկողություն սահմանեն:

Իսլամական կառավարման նպատակը նայանում է նրանում, որպեսզի բարձրացվի մարդու անհատականությունը որպես աստվածային համակարգ, ինչպես նաև մարդու հնարավորությունների ծաղկման և բացահայտման շնորհիվ ցույց տրվի նրա աստվածահաճո լինելը (և վերադառնալով Ալլահին): (Սուրահ «Լույս», այաթ 42): Այս բոլորը կախված է հասարակական բոլոր ուժերի՝ հասարակության վերակառուցմանը լայնորեն մասնակցություն ունենալուց:

Հենց դրա համար էլ Սահմանադրությունը հիմք է ստեղծում հասարակության բոլոր անդամների համար, որ մասնակցություն բերեն քաղաքական ձակատագրական որոշումների

բոլոր փուլերին, որպեսզի յուրաքանչյուրը պատասխանատու լինի հասարակության համար՝ մարդկային զարգացման ճանապարհին: Դա էլ կլինի ընչազուրկների՝ աշխարհում կառավարելու սկզբունքների իրագործումը: (Մենք ցանկանում ենք զթասրտություն ցուցաբերել նրանց նկատմամբ, ովքեր թույլ են երկրի վրա, կպատրաստենք նրանց որպես իմամներ և գահաժառանգներ: Սուրահ «Պատմվածք», այաթ 5):

ԱՐԴԱՐԱՑԻ ՖԱԴԻՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Համաձայն իմամների կառավարման շարունակականության սկզբունքին, Սահմանադրությունը հանդիսանում է առաջնորդի կառավարման հիմնաքարը, որը համապատասխանում է ժողովրդի կողմից ճանաչված նրա բոլոր պահանջներին (գործերը իրականացվում են ուլեմների կողմից, որոնք ճշտորեն կատարում են Աստծո կամքը կարելիում և անկարելիում: Սուրբ հադիս):

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋՈՑ Է, ՈՉ ԹԵ ՆՊԱՍԱԿ

Տնտեսական կարողության ամրապնդման գործում ամենակարևորը մարդու զարգացման և հոգևոր աճի ընթացքում պահանջմունքների բավարարումն է, ինչով առանձնանում է տընտեսական մյուս ֆորմացիաներից, որոնք ձգտում են բազմապատկել հարստությունը և շահադիտական նպատակներ են հետապնդում: Համաձայն նյութական աշխարհընկալման տնտեսությունը հենց ինքը նպատակ է: Այդ պատճառով էլ մարդկության զարգացման տարբեր փուլերում տնտեսությունը քայքայվել և անկում է ապրել: Միևնույն ժամանակ իսլամում տնտեսությունն ընկալվում է որպես միջոց, որից ոչինչ չի կարելի սպասել, բացի նպատակներին հասնելու համար առաջադրված արտադրողականությունից:

Իսլամական տնտեսությունը նախատեսում է բնականոն պայմաններ ստեղծել մարդու ստեղծագործական կարողության համար: Դրա համար էլ իսլամական կառավարումը պարտավոր է հավասար պայմաններ ստեղծել բոլորի համար, զբաղվածությունը և մարդու պահանջմունքների բավարարվածությունը օգտագործել նրա զարգացման շարունակման

համար:

ԿԻՆԸ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Իսլամի սոցիալական հիմքի ստեղծման ժամանակ նրանք, ովքեր մինչ այդ օտարերկրյա շահագործման էին ենթարկվել, կրկին ծեռք են բերում իրենց մարդկային նշանակությունը: Քանի որ կանայք գտնվում էին մեծ սատանայի բռնակալական վարչակարգի լծի տակ, ապա նրանք պետք է ծեռք բերեն ավելի շատ իրավունքներ:

Ընտանիքը հասարակության հիմնական սաղմն է և մարդկության զարգացման և հարատևման հիմնական օջախը: Անհրաժեշտ է ընտանիք կազմելիս համաձայնության հասնել հայացքներում ու հոգևոր իդեալներում, որը իսլամական կառավարման հիմնական խնդիրներից է: Ընտանիքի նկատմամբ նման մոտեցման դեպքում կինը այլևս չի դիտվում որպես «ապրանք», կամ «աշխատանքի միջոց»՝ շահագործվելու և սպառման գաղափարախոսության համար: Նա կրկին ստանում է իր պատվավոր և լուրջ պատասխանատվությունը՝ մայրությունը: Նա դաստիարակում է երեխաներին կրոնական ոգով և տղամարդու հետ

քայլում է սոցիալական ակտիվ կյանքի առաջին շարքերում: Այսպիսով, նա ծեռք է բերում ավելի լուրջ առաքելություն և պատասխանատվություն, որը իսլամի տեսանկյունից ամենաարժեքավորն ու պատվաբերն է:

ԻՍԼԱՄԻ ԲԱՆԱԿԸ

Երկրի պաշտպանության համար կազմավորվող պաշտպանական զինված ուժերի ստեղծման ժամանակ ուշադրության է արժանի այն, որ դրանց գործունեության հիմքը և սկզբունքը դառնա հավատը դեպի իսլամական ուսմունքը: Իրանի Իսլամական Հանրապետության բանակը և Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը ստեղծվում են այդ նպատակների համար: Ոչ միայն սահմանների պահպանումը, այլ նաև Իսլամական կոչումը, այսինքն՝ «Ջիհադը» հանուն Աստծո, ինչպես նաև պայքարը հանուն աշխարհում աստվածային օրենքի, դրված է նրանց ուսերի վրա: (Եվ պատրաստեք նրանց համար ինչքան կարող եք ուժեր և հեծյալ ջոկատներ և դուք կսարսափեցնեք Ալլահի և ձեր ժողովուրդի թշնամիներին ու դրա հետ

մեկտեղ նաև մյուսներին: Սուրահ «Ավար», այսբ 60):

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Իսլամական շարժման ժամանակ արդարադատության դժվարությունը՝ կապված մարդու իրավունքների հետ, և շտկելու համար այդ ճանապարհին նկատվող չնչին շեղումն իսլամական ումմայի կողմից, ունի կենսական նշանակություն: Դրա համար էլ նախատեսվում է ստեղծել արդարադատության համակարգ՝ հիմնված իսլամական արդարության և իսլամական կանոններին լիակատար տիրապետող արդար դատավորների առկայության վրա: Հաշվի առնելով հարցի հիմնարար կարևորությունը՝ դատական համակարգը պետք է լինի մաքուր իր բոլոր դրսևորումներում: (Եվ երբ դուք դատում եք մարդկանց, ապա դատեք արդարացի: Սուրահ «Կին», այսբ 58):

ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Նկատի ունենալով գործադիր իշխանության կարևորությունը իսլամական օրենքները իրագործելու և հասարակության մեջ արդարացի հարաբերություններ հաստատելու, ինչպես նաև կենսական նշանակություն ունեցող վերջնական նպատակ ապահովելու համար, այն պետք է ստեղծի իսլամական հասարակարգ: Դրա համար իսլամի տեսանկյունից չի ընդունվում այնպիսի վարչակարգ, որը ստեղծելով արգելքներ և ուղեփակոցներ, խանգարում է շարժմանը՝ այդ նպատակին հասնելու գործում և դանդաղեցնում այն: Դրա հետևանքով կըտրականապես մերժվում են սատանայական, բռնակալական վարչակարգի ծնունդ բյուրոկրատական մեխանիզմները, որպեսզի դրանց տեղը գրավի ավելի արդյունավետ գործադիր մեխանիզմ, որը կարողանա արագորեն կատարել իր վարչական պարտականությունները:

Չանգվածային լրատվամիջոցները (ռադիո, հեռուստատեսություն), Իսլամական հեղափոխության զարգացման ընթացքում պետք է ծառայեն իսլամական մշակույթի տարածմանը, կիրառելով տարբեր գործնական տեսակետներ և զաղափարներ, ձեռնպահ մնալով հակաիսլամական և ապակողմնորոշիչ երևույթներից: Բոլորը պարտավոր են հետևել օրենքի սկզբունքներին, որն իր գլխավոր նպատակն է համարում ապահովել մարդու արժանապատվությունը ու ազատությունը և ճանապարհ բացել նրա կատարելագործման և զարգացման համար: Իսլամական համայնքը պարտավոր է ընտրել և կարող է մշտապես վերահսկել պաշտոնական անձանց օրինական գործունեությունը՝ մասնակցելով այդպիսով իսլամական համակարգի կառուցմանը, որը Աստծո օգնությամբ օրինակ կդառնա ամբողջ աշխարհի համար:

(Եվ մենք այսպիսով ձեզ կերտեցինք որպես միջանկյալ հասարակություն, որպեսզի դուք դառնաք օրինակելի մարդկանց համար: Սուրահ «Կոլ», այաթ 143):

Ժողովրդի ներկայացուցիչները կազմված Սահմանադրական ժողովի փորձագետների խորհուրդը, նկատի ունենալով վերը շարադրված նպատակները և շարժառիթները, ավարտեց իր աշխատանքը Սահմանադրության վրա՝ կազմված 12 զլխից, որը ներառում է 175 հոդված, և կառավարության կողմից ներկայացված նախատեքստի ուսումնասիրման, բնակչության տարբեր խմբերի առաջարկների հիման վրա Մոհամմադի (թող նրա հետ լինի Ալլահի ողորմածությունը) հիջրեթի 15-րդ դարասկզբի նախաշեմին, որ հիմնել է իսլամական ազատատենչ ուսմունքը:

Հուտով ենք, որ լուսնային հիջրայի նոր դարը կդառնա ամբողջ աշխարհում ընչազուրկների կողմից բոլոր բռնակալների տապալման դար:

ՀԱՆՈՒՆ ԳԹԱՍԻՐՏ ԵՎ ԲԱՐԵԳՈՒԹ ԱՍՏՈ

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅՑՆԵՐ

Հոդված 1

Իրանը Իսլամական Հանրապետություն է և Իրանի ժողովուրդը, խորապես հավատ ընծայելով արդարության իշխանության և Դուրանի արդարամտության նկատմամբ, իմամ Խոմեյնիի գլխավորած իսլամական պանծալի հեղափոխության հաղթանակից հետո 1358 թվականի բահման ամսի 11-ին անցկացված հանրաքվեի ժամանակ ընտրելու իրավունք ունեցող քվեարկողների ծայների 98.2 %-ով իր դրական վերաբերմունքն արտահայտեց դրա նկատմամբ:

Հոդված 2

Իսլամական Հանրապետությունը հիմնված է՝

1. Միաստվածության՝ (Լա-Էլահ-Էլա-Ալլահ) «Չկա Աստված, բացի Ալլահից» և նրան հնազանդվելու, ինչպես նաև նրա կամքին ենթարկվելու,

2. Աստվածային ներշնչանքի և օրենքների

մեկնաբանման ժամանակ դրա հիմնարար դերի, 3. Ահեղ դատաստանի և դրա արդյունավետ դերի, որն ուղղված է մարդու կատարելագործմանն առ Աստված,

4. Աստվածային արդարության, շարիաթի օրենքների հաստատման,

5. Իմամների հաջորդականության (իմամաթ) և խնամակալություն հասարկության նկատմամբ, որն ունի հիմնարար դեր այդ սկզբունքների նկատմամբ և իսլամական հեղափոխության շարունակման գործում,

6. Վեհանձնության և մարդկայինբարձրագույն արժեքի՝ ազատության, և նրա Աստծո առջև պատասխանատվության վրա, որ ապահովում է հավասարություն, արդարություն և քաղաքական, տնտեսական, մշակութային և սոցիալական անկախություն, ինչպես նաև ազգային միասնականություն՝ համերաշխության ճանապարհով:

ա) Շարիաթի օրենքների շարունակական կատարում, որը համապատասխանում է ֆաղիհների պահանջներին և սրբակենցաղ 14 իմամների գրությանն ու սունաներին (թող նրանց հետ լինի Ալլահի ողորմությունը):

բ) Նրանց զարգացման ճանապարհին օգտագործել մարդկային մտքի առաջավոր թռիչքն ու ջանքերը:

գ) Մերժել մեկի կողմից մյուսի շահագործումը, ինչպես նաև մարդու գերիշխանությունը մյուսների նկատմամբ:

Յոդված 3

Իրանի Իսլամական Հանրապետության կառավարությունը պարտավոր է երկրորդ հոդվածում նշված նպատակներին հասնելու համար գործի դնել բոլոր հնարավորությունները ներքոշարադրյալ աշխատանքներն իրագործելու համար,

1. Հավատքի ու նվիրվածության վրա հիմնված բարոյականության աճի, ինչպես նաև բոլոր տեսակի բարոյազանցությունների ու բարոյալքվածության դեմ պայքարի նպաստավոր միջավայրի ստեղծում,

2. Մամուլի, զանգվածային և այլ լրատվամիջոցների խելամիտ օգտագործման միջոցով բոլոր բնագավառներում համընդհանուր գիտելիքների մակարդակի բարձրացում,

3. Բոլորի համար և բոլոր մակարդակներով անվճար ուսուցում և ֆիզիկական դաստիարակություն, ինչպես նաև բարձրագույն ուսուցման համար նպաստավոր պայմանների ստեղծում և ընդլայնում,

4. Գիտության, տեխնիկայի, մշակույթի և իսլամի բոլոր բնագավառներում հետազո-

տությունների, ուսումնասիրությունների և նախաձեռնության ոգու բարձրացում՝ հետազոտական կենտրոնների հիմնադրման և հետազոտությունների խրախուսման միջոցով,

5. Գաղութարարության լիակատար մերժում և օտարների ներթափանցման կանխում,

6. Ցանկացած տեսակի բռնատիրության, կամայականության և մենատիրության ոչնչացում,

7. Օրենքի սահմաններում քաղաքական և հասարակական ազատությունների ապահովում,

8. Քաղաքական, տնտեսական, հասարակական և մշակութային հարցերի լուծմանը ժողովրդի մասնակցության ապահովում,

9. Անտեղի խտրականությունների վերացում և բոլորի համար արդարացի պայմանների ապահովում,

10. Առհարկի վարչական համակարգի ստեղծում և ոչ անհրաժեշտ կառույցների վերացում,

11. Ազգային պաշտպանական հիմքերի լիակատար հզորացում՝ համընդհանուր ռազմագիտական ուսուցման միջոցով, երկրի անկախության, տարածքային ամբողջականության և իսլամական համակարգի պահպանման նպատակով,

12. Իսլամական նորմերին համապատասխան առհարկի և արդարացի տնտեսական հիմքերի ստեղծում՝ բարեկեցության ստեղծման, չքավորության, ինչպես նաև սննդի, բնակարանի, աշխատանքի և առողջապահության հարցերում գրկանքների վերացման և ապահովագրական համակարգի տարածման միջոցով,

13. Գիտության, տեխնիկայի, արդյունաբերության, գյուղատնտեսության, զինվորական գործի և այլնի ինքնաբավության ապահովում,

14. Կանանց և տղամարդկանց համակողմանի իրավունքների ապահովում, բոլորի համար արդարադատության և օրենքի առջև իրավահավասարության ապահովում:

15. Իսլամական եղբայրության և համընդհանուր համագործակցության զարգացում ու ամրապնդում:

16. Իսլամի նորմերի հիման վրա երկրի արտաքին քաղաքականության մշակում, համայն մուսուլմանների նկատմամբ եղբայրական նվիրվածություն և աշխարհի ընչազուրկների նկատմամբ հոգատարություն:

Հոդված 4

Քաղաքացիական, քրեական, ֆինանսական, տնտեսական, վարչական, մշակութային, ռազմական, քաղաքական և այդ կարգի բոլոր

օրենքները պետք է հիմնված լինեն իսլամական նորմերի վրա: Այս սկզբունքը տարածվում է Սահմանադրության բոլոր հոդվածների, ինչպես նաև բոլոր օրենքների և նորմատիվ ակտերի վրա, իսկ դրա որոշումը վերապահված է Պահապան խորհրդի կրօնագետներին:

Հոդված 5

Վալիե Ասրի՝ (Թող Ալլահը մոտեցնի նրա հայտնությունը) բացակայության ժամանակ Իրանի Իսլամական Հանրապետությունում առաջնորդությունը և ժողովրդի հովվապետությունն իրականացնում է արդար ու հավատացյալ, ժամանակի խնդիրներին լավատեղյակ, համարձակ, նախաձեռնող և կազմակերպիչ Ֆադիհը՝ առաջնորդը, որն ըստ 107-րդ հոդվածի, ստանձնում է իր պարտականությունները:

Հոդված 6

Իրանի Իսլամական Հանրապետությունում երկրի գործերի կառավարումը պետք է տեղի ունենա համընդհանուր քվեարկությամբ, երկրի նախագահը, Մեջլիսի պատգամավորները, խորհուրդների անդամները և այլք ընտրվում են ժողովրդի կողմից, իսկ Սահմանադրության այլ հոդվածներում նախատեսված դեպքերում՝

հանրաքվեով:

Չոդված 7

Սուրբ Ղուրանի հրահանգի համաձայն, համաձայն, (հրահանգեց նրանց խորհուրդ ունենալ, «խորհուրդ» Սուրահ 38, «խորհրդակցիր նրանց հետ գործի մասին») (Իմրանի ընտանիքի Սուրահ) խորհուրդները՝ իսլամական խորհրդի մեջլիսը, Նահանգային խորհուրդը, մարզային խորհուրդը, քաղաքային խորհուրդը, շրջանային խորհուրդը, գյուղական խորհուրդը և այդ կարգի այլ խորհուրդները հանդիսանում են երկրի որոշումներ կայացնող կառավարման օղակները:

Խորհուրդների կառուցվածքը, լիազորությունների շրջանակները և պարտականությունները սահմանում են այս օրենքը և նրանից բխող այլ օրենքները:

Չոդված 8

Իրանի Իսլամական Հանրապետությունում բարուն ընդառաջ գնալը, լավի խրախուսումն ու չարի մերժումը համարվում են համընդհանուր և միմյանց՝ ժողովուրդը պետության և պետությունը ժողովրդի հանդեպ փոխադարձաբար գործադրելի պարտականություն: Դրա պայմանները, սահմանները, ինչպիսին լինելը և պարտականությունների կատարումը որոշվում

է օրենքով:

«Հավատացյալ տղամարդիկ և հավատացյալ կանայք միմյանց հանդեպ արտահայտում են կողակցի իմաստ: Նրանք խթանում են միմյանց ճանաչվածի համար և ձեռնպահ են մնում հավանության չարժանացածից» (Մեղանչման Սուրահ, 71):

Չոդված 9

Իրանի Իսլամական Հանրապետությունում ազատությունը, միասնականությունը, անկախությունը և երկրի տարածքային ամբողջականությունն անբաժանելի տարրեր են և դրանց պահպանումը հանդիսանում է կառավարության և ամբողջ ժողովրդի պարտականությունը:

Ոչ մի անձ, խումբ կամ պաշտոնյա, իրավունք չունի չարաշահելով ազատությունը, ամենափոքր իսկ չափով վնասել երկրի քաղաքական անկախությանն ու տարածքային ամբողջականությանը, և ոչ մի պաշտոնատար անձ իրավունք չունի հանուն քաղաքական անկախության և երկրի տարածքային ամբողջականության, նույնիսկ օրենքների ներդրման միջոցով խախտել օրինական ազատության սահմանները:

Հոդված 10

Քանի որ ընտանիքը հանդիսանում է իսլամական հասարակության կորիզը, բոլոր օրենքները, օրենսդրական ակտերը և պլանային ծրագրերը պետք է ուղղված լինեն ընտանիք կազմելու համար նպաստավոր պայմանների ստեղծմանը, դրա պահպանմանը և ընտանեկան կապերի ամրապնդմանը՝ համաձայն իսլամական իրավունքի և բարոյականության:

Հոդված 11

Ըստ Դուրանի Քարիմե այեի, «Իսկապես ձեր այդ ժողովուրդը միասնական ժողովուրդ է, և ես, ձեր Աստվածը, դե խոնարհվեք ինձ» (Մարգարեներ Սուրահ 92) բոլոր մուսուլմանները համարվում են մի ումնա (ազգ) և Իրանի Իսլամական Հանրապետությունը պարտավոր է իր համընդհանուր քաղաքականությունը հիմնել իսլամական ժողովուրդների համախոհության և միասնության վրա՝ հետևողականորեն աշխատելով իրականացնել իսլամական աշխարհի քաղաքական, տնտեսական և մշակութային միասնականությունը:

Հոդված 12

Իրանի պաշտոնական կրոնը՝ իսլամը, և դրա

Ջաֆարի-Ասնաաշարի ուղղությունն է, որը ճանաչում է 12 իմամների գոյությունը և այդ սկզբունքը մնալու է հավերժ անփոփոխ: Իսլամի այլ ուղղությունները՝ մասնավորապես Հանաֆին, Շաֆեին, Մալեքին, Հանբալին և Ջեյդին լիակատար հարգանքի են արժանի: Այս ուղղություններին հետևողները ազատորեն կարող են կատարել իրենց կրոնական ծեսերը, ինչպես

հետ կրոնաբանական բարեխոսություն -
թյամբ և նուտարական գործերով (ամուսնության, ամուսնալուծության, ժառանգության և կտակի հարցեր): Նրանց ընդունած վճիռները դատարաններում օրինական են համարվում: Այն շրջաններում, որտեղ այդ դավանանքների հետևորդները մեծամասնություն են կազմում, տեղական օրենքները, խորհուրդների լիազորությունների շրջանակներում, կհամապատասխանեցվեն այդ դավանանքներին՝ պահպանելով նաև այլ հավատացյալների իրավունքները:

Հոդված 13

Ջրադաշտ, հրեա և քրիստոնյա իրանցիները պաշտոնապես ճանաչված կրոնական փոքրամասնություններ են, որոնք օրենքի սահմաններում ազատորեն կարող են կատարել իրենց կրոնական ծեսերը, ինչպես նաև,

համաձայն իրենց կրոնքի, զբաղվել նոտարական գործերով և կրոնագիտական աշխատանքներով:

Յոդված 14

Ղուրանի Շարիֆա այեի համաձայն, «Չի տալիս Ալլահը ձեզ արգելում նրանց նկատմամբ, ովքեր չեն կռվել ձեզ հետ կրոնի պատճառով և չեն վտարել ձեզ ձեր տներից, օգտակար և բարերար լինել նրանց հանդեպ, քանի որ Ալլահը սիրում է արդարացիներին» (Փորձարկվող Սուրահ 8) Իրանի Իսլամական Հանրապետության կառավարությունը և մահմեդականները պարտավոր են ոչ մահմեդականների նկատմամբ բարյացակամ, բարեհաճ և արդար վերաբերմունք դրսևորել պահպանելով վերջիններիս մարդկային իրավունքները: Այս սկզբունքը տարածվում է այն մարդկանց վրա, ովքեր դավեր չեն նյութում իսլամի և Իսլամական Հանրապետության դեմ:

ԳԼՈՒԽ 2

ԵՐԿՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԼԵՁՈՒՆ, ԳԻՐԸ, ԹՎԱՐԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԻՈՇԸ

Յոդված 15

Իրանի ժողովրդի պաշտոնական գիրը և ընդհանուր լեզուն պարսկերեն լեզուն է: Պաշտոնական փաստաթղթերը, գրագրությունը, տեքստերը և դասագրքերը պետք է կազմվեն այդ լեզվով և գրով, սակայն տեղական և էթնիկ խմբերի լեզուների օգտագործումը մասնավոր և զանգվածային լրատվամիջոցներում և պարսկերեն լեզվին զուգահեռ նրանց գրականության ազատ դասավանդումը թույլատրելի է:

Յոդված 16

Քանի որ Ղուրանի և իսլամական ուսմունքի լեզուն արաբերենն է և պարսից գրականությունը ամբողջովին միախառնված է դրա հետ, արաբերենը պետք է տարրական ուսուցումից հետո մինչև միջնակարգի ավարտը դասավանդվի բոլոր դասարաններում և բոլոր մասնաճյուղերում՝ անկախ նրանց մասնագիտացումից:

Յոդված 17

Երկրի թվարկության պաշտոնական ելա-

կետը իսլամի Մարգարեի (Թող Ալլահի բարեմաղթանքներն ու օրհնանքը հետևի նրան և նրա տոհմին) հիջրեթն է (զաղթ): Արժանահավատ են թե՛ հիջրեթի արեգակնային և թե՛ լուսնային տարիները, սակայն պետական-կառավարական հիմնարկների աշխատանքային հիմքը հիջրեթի արեգակնային թվարկությունն է: Շաբաթվա պաշտոնական հանգստյան օրը ուրբաթն է:

Չողված 18

Իրանի պաշտոնական դրոշը կանաչ, սպիտակ, կարմիր եռագույնն է՝ Իսլամական Հանրապետության հատուկ նշանով՝ «Ալլահ օ Աքբար»-ով:

ԳԼՈՒԽ 3

ԺՈՂՈՎՐԴԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Չողված 19

Իրանի ժողովուրդը, անկախ էթնիկական և ցեղային պատկանելիությունից, օժտված է հավասար իրավունքներով և մարդու մաշկի գույնը, ռասան, լեզուն մեկը մյուսի նկատմամբ առավելության պատճառ դառնալ չի կարող:

Չողված 20

Հասարակության բոլոր անդամները՝ կանայք և տղամարդիկ, օրենքի առջև հավասար են և համաձայն իսլամի սկզբունքների, օգտվում են մարդու բոլոր, այդ թվում՝ քաղաքական, տնտեսական և մշակութային իրավունքներից:

Չողված 21

Կառավարությունը, իսլամական սկզբունքներին համապատասխան, պարտավոր է բոլոր բնագավառներում երաշխավորել կանանց իրավունքները՝ իրագործելով ներքոգրյալ կետերը.

1. Կնոջ անհատականության զարգացման համար ստեղծել նպաստավոր պայմաններ և վերականգնել նրա նյութական և բարոյական իրավունքները:

2. Հովանավորության տակ առնել մայրերին՝ հատկապես հղիության և նորածնի խնամքի ժամանակ, հոգ տանել խնամագուրկ երեխաների նկատմամբ:

3. Ընտանիքների պահպանման և հարատևման համար ստեղծել իրավասու դատարաններ:

4. Տարեց և խնամագուրկ կանանց և այրիների համար ստեղծել հատուկ ապահովագրական ծառայություն:

5. Շարիաթի օրենքով խնամակալի բացակայության դեպքում արժանի մայրերին հանձնել երեխաների խնամակալության իրավունքը:

Յոդված 22

Մարդկանց արժանապատվությունը, կյանքը, ունեցվածքը, բնակարանը և գբաղմունքը անձեռնմխելի են, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Յոդված 23

Հավատաքննությունն արգելված է, և ոչ մեկին չի կարելի իր ունեցած գաղափարի համար բռնության և քննության ենթարկել:

Յոդված 24

Մամուլը և հրատարակչությունը ազատորեն կարող են արտահայտել իրենց տեսակետները, եթե դրանք չեն հակասում իսլամի սկզբունքներին և չեն խախտում հանրության իրավունքները: Այդ խնդրին առնչվող մանրամասները որոշվում են օրենքի կողմից:

Յոդված 25

Նամակների քննումը և դրանց առաքման արգելքը, ինչպես նաև հեռախոսային խոսակցությունների բացահայտումն ու ծայնագրումը,

հեռագրերի և տելեքսների հրապարակումը, գրաքննությունը, այդ հաղորդագրությունների չփոխանցելը, ծայնագրությունը և ցանկացած այլ տեսակի քննությունն արգելված է, բացառությամբ այն դեպքերի, երբ թույլատրում է օրենքը:

Յոդված 26

Կուսակցությունները, միությունները, քաղաքական և արհեստակցական կազմակերպությունները, ինչպես նաև իսլամական և պաշտոնապես ճանաչված կրոնական փոքրամասնությունների միությունների գործունեությունն ազատ է, պայմանով, որ դրանք չխախտեն անկախության, ազատության, ազգային միասնության սկզբունքները, իսլամական նորմերը և Իսլամական Հանրապետության հիմքերը: Ոչ մեկի մասնակցությունը դրանցում չի կարելի արգելել, ինչպես նաև չի կարելի ստիպել մարդկանց մասնակցելու դրանցից որևէ մեկին:

Յոդված 27

Հավաքների ու երթերի կազմակերպումը առանց զենք կրելու իրավունքի, ազատ է, պայմանով, որ դրանք չխախտեն իսլամի նորմերը:

Հոդված 28

Յուրաքանչյուր ոք կարող է իր ցանկությամբ ընտրել այնպիսի մասնագիտություն, որը չի հակասի իսլամին և հանրության շահերին ու իրավունքներին:

Կառավարությունը պարտավոր է, նկատի ունենալով տարբեր մասնագիտությունների նկատմամբ հասարակության պահանջները, բոլորի համար զբաղվածության և աշխատանքի պայմաններ ապահովել՝ հավասար իրավունքներով աշխատանքի ընդունվելու պայմանով:

Հոդված 29

Յուրաքանչյուր ոք թոշակի անցնելիս, գործազրկության, ծերության, անաշխատունակության և խնամազրկության ժամանակ, ինչպես նաև անօգնական վիճակում հայտնվելիս, արտակարգ իրավիճակների դեպքում, բժշկական օգնության կամ բժշկական խնամքի կարիք ունենալիս, իրավունք ունի օգտվելու ապահովագրական և այլ կարգի սոցիալական ապահովությունից:

Կառավարությունը պարտավոր է, ըստ օրենքի, համընդհանուր եկամուտներից կամ ժողովրդի մասնակցությամբ գոյացող եկամուտներից, երկրի բոլոր քաղաքացիներին ապահովել վերոհիշյալ ծառայությունները կամ

կատարել անհրաժեշտ վճարումներ:

Հոդված 30

Կառավարությունը պարտավոր է մինչև միջնակարգի ավարտը յուրաքանչյուրին ապահովել անվճար ուսուցում և կրթություն՝ ընդլայնելով բարձրագույն անվճար կրթության ցանցը, ընդհուպ մինչև երկրի ինքնաբավության հասնելը:

Հոդված 31

Կարիքներին համապատասխանող բնակարան ունենալը յուրաքանչյուր իրանցի ընտանիքի իրավունքն է: Կառավարությունը պարտավոր է, պահպանելով առավել կարիքավորների՝ հատկապես գյուղաբնակների և բանվորների առաջնայնությունը, պայմաններ ստեղծել այս հոդվածն իրագործելու համար:

Հոդված 32

Ոչ մեկին չի կարելի ծերբակալել, բացառությամբ օրենքով սահմանված կարգով: Ձերբակալության դեպքում, մեղադրանքի նությունը համապատասխան պատճառաբանություններով անմիջապես եւ գրավոր պետք է ներկայացնել մեղադրյալին, որից հետո առավելագույնը 24 ժամվա ընթացքում պետք

է լիազորված դատական մարմինների վարույթին հանձնել նախնական գործը եւ հնարավորին կարճ ժամկետներում նախապատրաստել դատավարությունը: Այս հոդվածը խախտողները պատժվում են համաձայն օրենքի:

Հոդված 33

Ոչ մեկին չի կարելի աքսորել իր բնակավայրից, թույլ չտալ բնակվել իր ցանկացած բնակավայրում կամ պարտադրել բնակություն հաստատել որևէ վայրում, բացառությամբ օրենքով սահմանված կարգի:

Հոդված 34

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի բողոքելու և ամեն մեկը կարող է իր բողոքը ներկայացնելու համար դիմել իրավասու դատարաններին: Նման դատարանները պետք է հասու լինեն բոլորին: Ոչ մեկին չի կարելի արգելել դիմել այն դատարանը, որին օրենքով դիմելու իրավունք ունի:

Հոդված 35

Բոլոր դատարաններում, դատավարության կողմը հանդիսացող անձինք դատապաշտպան ընտրելու իրավունք ունեն: Եթե որևէ մեկը ի

վիճակի չլինի դատապաշտպան ընտրելու, պետք է նրա համար դատապաշտպան նշանակելու հնարավորություն ստեղծել:

Հոդված 36

Ղատավճիռը և դրա գործադրումը պետք է տեղի ունենա կոմպետենտ դատարանի կողմից՝ համաձայն օրենքի:

Հոդված 37

Մինչև դատարանի կողմից հանցանքի ապացուցելը, գործում է անմեղության կանխավարկածը: Ոչ ոք չի կարող օրենքով հանցավոր ճանաչվել:

Հոդված 38

Խոստովանություն վերցնելու կամ տեղեկություններ ստանալու համար ցանկացած տիպի չարչարանքն արգելվում է: Չի կարելի մարդկանց պարտադրել վկայություն, խոստովանություն կամ երդում տալու համար: Նման վկայությունները, խոստովանությունները և երդումները որևէ արժեք չունեն և հավաստի համարվել չեն կարող: Այս հոդվածի խախտողը պատժվում է օրենքով:

Հոդված 39

Օրենքի համաձայն՝ ձերբակալված անձանց վիրավորանք հասցնելը և արժանապատվությունը վիրավորելը, արգելված է և դրա համար պատիժ է նախատեսվում:

Հոդված 40

Ոչ մեկը իրավունք չունի իր իրավունքին հասնելու համար ուրիշին վնաս հասցնել կամ դիպչել հանրության շահերին:

Հոդված 41

Յուրաքանչյուր իրանցի իրավունք ունի ըստանալու Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիությունը և կառավարությունը չի կարող որևէ իրանցու զրկել քաղաքացիության իրավունքից, բացառությամբ այն դեպքերում, երբ ինքն է դիմում կամ ստանում է այլ երկրի քաղաքացիությունը:

Հոդված 42

Օտարերկրյա քաղաքացիները կարող են օրենքի սահմաններում ընդունել Իրանի քաղաքացիություն: Նրանց քաղաքացիությունից զրկելը հնարավոր է միայն այն դեպքում, եթե մեկ այլ կառավարություն ընդունում է նրա քաղաքացիությունը կամ տվյալ անձը դիմում է

այդ մասին:

ԳԼՈՒԽ 4

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

Հոդված 43

Հասարակության տնտեսական անկախությունն ապահովելու, ինչպես նաև չքավորության ու զրկանքների դեմ պայքարելու և զարգացման ընթացքում գտնվող մարդկանց կարիքները բավարարելու նպատակով, նրանց ազատությունը պահպանելով հանդերձ, Իրանի Իսլամական Հանրապետության տնտեսությունը հիմնված է ներքոհիշյալ նորմերի վրա.

1. Հիմնական կարիքների ապահովումը բնակարան, սնունդ, հագուստ, առողջապահություն, բժշկական սպասարկում, կրթություն և ընտանիք ծնավորելու համար անհրաժեշտ միջոցներ:

2. Բոլորի համար աշխատանքային պայմանների ստեղծում՝ լիակատար զբաղվածության

աստիճանի հասնելու նպատակով, և աշխատանքի միջոցներից զուրկ բոլոր աշխատունակ մարդկանց՝ կոոպերատիվ հիմունքներով և անտոկոս վարկերի տրամադրումով կամ այլ օրինական ճանապարհներով աշխատանքի միջոցների ապահովում, ինչը կբացառի անհատ անձանց կամ մարդկանց որոշակի խմբի մոտ հարստության կուտակումը և հնարավորություն չի տա կառավարությանը հանդես գալու մենաշնորհային դիրքերից: Նման ձեռնարկումները պետք է իրականացվեն՝ նկատի առնելով երկրի տնտեսության պլանավորումից բխող հրամայականները՝ զարգացման յուրաքանչյուր փուլի ժամանակ:

3. Երկրի տնտեսության պլանավորում այն հաշվարկով, որ աշխատանքային պայմանները՝ ձևը, բովանդակությունն ու զբաղման յուրաքանչյուր անհատին՝ աշխատանքային ծանրաբեռնվածությունից բացի բավարար ժամանակ և ունակություն ունենա զբաղվելու նաև բարոյական, քաղաքական և սոցիալական ինքնազարգացմամբ, ինչպես նաև կորողանալ ակտիվորեն մասնակցել երկրի կառավարման գործին և բարձրացնել մասնագիտական որակավորումը:

4. Մասնագիտություն ընտրելու հարցում ազատ որոշում կայացնելու հնարավորության

ընձեռում բացառելով հարկադիր աշխատանքն ու մարդկանց շահագործումը:

5. Թույլ չտալ այնպիսի գործունեություն, որը վնաս է հասցնում այլոց, ստեղծում մենաշնորհային իրավիճակ: Կանխել սպեկուլյացիան, վաշխառությունը և շարիաթով արգելված այլ գործարքները:

6. Տնտեսության տարբեր բնագավառներում, այդ թվում՝ միջոցների օգտագործման, կապիտալ ներդրումների, արտադրության, բաշխման և ծառայությունների ժամանակ շրջալսության և հափշտակումների կանխում:

7. Երկրի տնտեսության զարգացման և բարգավաճման կարիքներն ապահովելու համար գիտության, տեխնիկայի օգտագործում և որակավորված մասնագետների պատրաստում:

8. Երկրի տնտեսության վրա օտարերկրացիների տնտեսական տիրապետման կանխարգելում:

9. Հանրության կարիքների ապահովմանն ու երկրի ինքնաբավությանն ու տնտեսական անկախությանն ուղղված՝ գյուղատնտեսական, անասնապահական և արդյունաբերական արտադրանքի աճի նկատմամբ հոգատար վերաբերմունք:

Հողված 44

Իրանի իսլամական Հանրապետության տնտեսական համակարգը խարսխված է պետական, կոոպերատիվ և մասնավոր հատվածների վրա՝ իր հիմքում ունենալով կանոնավոր և անսխալ պլանավորում:

Պետական հատվածն իր մեջ ներառում է բոլոր խոշոր արդյունաբերական ձեռնարկությունները, մայր արդյունաբերությունը, արտաքին առևտուրը, խոշոր հանքերը, դրամատները, ապահովագրությունը, էներգիայի մատակարարման աղբյուրները, ջրամբարները, ոռոգման խոշոր ցանցերը, ռադիոն, հեռուստատեսությունը, փոստը, հեռագիրը, հեռախոսը, օդազնացությունը, նավագնացությունը, ավտոմոբիլային և երկաթուղային ճանապարհները և նման այլ միջոցները, որոնք հանրային սեփականության տեսքով գտնվում են կառավարության տնօրինության տակ:

Կոոպերատիվ հատվածն իր մեջ ներառում է կոոպերատիվ հիմունքներով ստեղծված արտադրական և բաշխման ընկերություններն ու ձեռնարկությունները, որոնք քաղաքներում և գյուղական բնակավայրերում ստեղծվում են իսլամական նորմերին համապատասխան:

Մասնավոր հատվածն իր մեջ ներառում է

գյուղատնտեսության, անասնապահության, արդյունաբերության, առևտրի և ծառայությունների այն բաժինը, որը լրացնում է պետական և կոոպերատիվ տնտեսական գործունեությունը:

Սեփականության հարցը նշված երեք բաժիններում, եթե չի հակասում Սահմանադրության տվյալ գլխում նշված սկզբունքերին և համապատասխանում է իսլամական օրենքներին և նպաստում տնտեսության զարգացմանն ու չի վնասում հասարակությանը, հովանավորվում է Իսլամական Հանրապետության կողմից:

Նշված երեք հատվածների գործունեության սահմանների և նորմերի մանրամասները նախատեսվում են օրենքով:

Հողված 45

Հանրային սեփականություն է համարվում լքված, խոպան հողերը, հանքերը, ծովերը, լճերը, գետերը, և հանրային նշանակությամբ այլ ջրային ավազանները, լեռները, ձորերը, անտառները, եղեգնուտները, բնական պուրակները, արգելանոց չհանդիսացող արոտավայրերը, առանց ժառանգորդի ժառանգությունները, անհայտ սեփականությամբ ունեցվածքը և բռնագրավված հանրային ունեցվածքը

գտնվում են Իսլամական իշխանության տընօրինության տակ, որը նկատի ունենալով հանրության շահերը, կոչված է տնօրինելու դրանք: Դրանցից յուրաքանչյուրի մանրամասները և կարգը հաստատվում է օրենքի կողմից:

Հոդված 46

Յուրաքանչյուր ոք հանդիսանում է օրինական ճանապարհով կատարած իր աշխատանքի և ֆինանսական գործունեության վաստակի տերը ,և ոչ մեկը չի կարող իր վաստակը տնօրինելու անվան տակ ուրիշին զրկել աշխատանքի և ֆինանսական գործունեություն կատարելու հնարավորությունից:

Հոդված 47

Օրինական ճանապարհով ձեռք բերված սեփականությունը հարգվում է: Դրա նորմերը հաստատվում են օրենքի կողմից:

Հոդված 48

Նահանգների մակարդակով բնական ռեսուրսների շահագործման և ազգային եկամուտների օգտագործման, ինչպես նաև ըստ նահանգների ու երկրի տարբեր շրջանների՝ տնտեսական գործունեությունների բաշխման

ժամանակ չպետք է խտրականություն դրվի, այն հաշվարկով, որ յուրաքանչյուր շրջանին իր կարիքների ու զարգացման կարողությունների չափով տրամադրվի անհրաժեշտ քանակությամբ կապիտալ և միջոցներ:

Հոդված 49

Կառավարությունը պարտավոր է վաշխառությունից, բռնագրավումներից, կաշառակերությունից, դրամաշորթությունից, գողությունից, խաղամոլությունից գոյացած հարըստությունները, ինչպես նաև հրիտակության չարաշահումներից, պետական կապալառությունների ու գործարքների չարաշահումներից առաջացած միջոցները, լքված և կրոնապատկան կալվածքների վաճառքից ստացված գումարները, բարոյական նորմերին չհամապատասխանող ու անօրինական միջոցներով գոյացած եկամուտները բռնագրավել և հանձնել իսկական տիրոջը:

Այդ միջոցների տերը անհայտ լինելու դեպքում նշված գումարները հանձնվում են պետությանն՝ ի տնօրինություն: Համապատասխան վճիռը պետք է կայացվի կառավարության կողմից՝ անհրաժեշտ քննություններից ու ապացույցներից հետո:

Յոդված 50

Իսլամական Հանրապետությունում բնության ներկա և ապագա սերունդների բնականոն կենսագործունեությանը նպաստող պահպանումը հանդիսանում է հանրության պարտականությունը: Այդ իսկ պատճառով, կենսոլորտի աղտոտվածությանն ու շրջակա միջավայրի ապականացմանը հանգեցնող տնտեսական և այլ գործողություններն արգելված են:

Յոդված 51

Հարկերը նշանակվում են միայն օրենքին համապատասխան: Հարկերից ազատվելը, հարկային արտոնություններից օգտվելը և հարկային զեղչերը որոշվում են օրենքով:

Յոդված 52

Երկրի տարեկան ընդհանուր բյուջեն, օրենքի համաձայն, կազմվում է կառավարության կողմից և հանձնվում Իսլամական խորհրդարանի քննարկմանն ու հաստատմանը: Թվերի ցանկացած փոփոխությունը բյուջեում կատարվում է օրենքով նախատեսված կարգով:

Յոդված 53

Կառավարության բոլոր եկամուտները կենտրոնացվում են ընդհանուր գանձարանի

հաշվեհամարում, իսկ բոլոր վճարումները կատարվում են օրենքով հաստատված վարկերի սահմաններում:

Յոդված 54

Երկրի հաշվարկային դատարանը գտնվում է Իսլամական խորհրդի մեջլիսի անմիջական ենթակայության տակ: Դրա վարչությունը տեղակայվում է Թեհրանում իսկ բաժանմունքները նահանգների կենտրոններում համապատասխան օրենքի:

Յոդված 55

Հաշվարկային դատարանը վերահսկում է նախարարությունների, ծեռնարկությունների, պետական ընկերությունների և պետական բյուջեից այս կամ այն չափով ֆինանսավորվող գերատեսչությունների բոլոր հաշիվները, որոնք ինչ որ չափով օգտագործում են երկրի պետական բյուջեն, հանդգվելու համար, որ հաստատված վարկերի գերածախս տեղի չի ունեցել, և որ ցանկացած զումար ծախսվել է ճիշտ: Հաշվարկային դատարանը, համաձայն օրենքի, պատրաստում է համապատասխան ֆինանսական հաշվարկներ, հաշիվներ և փաստաթղթեր, ամեն տարի բյուջեի կատարման մասին հաշվետվություն է ներկայցնում Իսլա-

մական մեջլիսին՝ իր առաջարկությունների և եզրակացությունների հավելվածով: Այդ գեկույցը պետք է հրապարակվի համընդհանուր ծանոթության համար:

ԳԼՈՒԽ 5

ԺՈՂՈՎՐԴԻ ԱՆԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Յոդված 56

Աշխարհի և մարդու վրա բացարձակ իշխանությունը պատկանում է Աստծուն, որը մարդուն տվել է իշխանություն իր հասարակական կյանքի վրա:

Ոչ ոք չի կարող մարդուց վերցնել այդ աստվածային իրավունքը, կամ այն դնել ինչ-որ մարդու, կամ մարդկանց խմբի շահերին ծառայեցնելու համար:

Ժողովուրդն իրականացնում է Աստծո տված այդ իրավունքը, այնպես, ինչպես նշված է ներքոշարադրյալ հոդվածներում:

Յոդված 57

Իրանի Իսլամական Հանրապետության կառավարումը իրագործվում է օրենսդիր, գոր-

ծադիր և դատական իշխանությունների կողմից, որոնք գործում են իմամի բացարձակ կառավարման (վելայաթե ֆադիհ) վերահսկողությամբ՝ համաձայն Սահմանադրության ներքոշարադրյալ հոդվածների:

Նշված իշխանություններն իրարից անկախ են:

Յոդված 58

Օրենսդիր իշխանությունն իրականացնում են ժողովրդի կողմից ընտրված Իսլամական խորհրդի մեջլիսի պատգամավորները:

Նրա որոշումները հաջորդ հոդվածներում նշված օրենսդրական ընթացակարգն անցնելուց հետո հանձնվում են գործադիր և դատական իշխանություններին՝ ի կատար ածելու համար:

Յոդված 59

Տնտեսական, քաղաքական, սոցիալական և մշակութային կարևորագույն խնդիրները օրենսդիր իշխանությունը կարող է որոշել հանրաքվեի միջոցով՝ ժողովրդի կամքին ուղղակի դիմելու ճանապարհով:

Համաժողովրդական քվեարկության պահանջը պետք է հաստատվի Մեջլիսի պատգամավորների երկու երրորդի կողմից:

Յոդված 60

Գործադիր իշխանությունն իրականացվում է նախագահի և նախարարների կողմից, բացառությամբ այն դեպքերի, որոնք սույն Սահմանադրությամբ գտնվում են երկրի առաջնորդի իրավասության տակ:

Յոդված 61

Ղատական իշխանությունն իրականացվում է արդարադատության համակարգի դատարանների կողմից, որոնք պետք է կազմավորված լինեն իսլամի նորմերին համապատասխան և զբաղվեն վեճերի լուծմամբ, հասարակական իրավունքների պաշտպանությամբ, արդարադատության կատարելագործմամբ, ինչպես նաև համաձայն կրոնական կարգադրերի պատիժների իրագործմամբ:

ԳԼՈՒԽ 6

ՕՐԵՆՍԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԻՍԼԱՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՄԵԶԼԻՍԸ

ԲԱԺԻՆ 1

Յոդված 62

Իսլամական խորհրդի մեջլիսը կազմավորվում է ժողովրդի ներկայացուցիչներից, ուղղակի, փակագաղտնի քվեարկության միջոցով:

Օրենքը սահմանում է պատգամավորության թեկնածուներից և ընտրողներից պահանջվող նորմերը, ինչպես նաև ընտրությունների կարգը:

Յոդված 63

Իսլամական խորհրդի մեջլիսի պատգամավորների լիազորությունների ժամկետը 4 տարի է: Յուրաքանչյուր հերթական ընտրությունները պետք է անցկացվեն այնպիսի ժամկետներում, որ ավարտված չլինեն նախորդ գումարման պատգամավորների լիազորությունները, որպեսզի երկիրը չմնա առանց Մեջլիսի:

Յոդված 64

Իսլամական խորհրդի մեջլիսի պատգամավորների թիվը 270 է: Արեգակնային հիջրայի 1368թ. (1989թ.) հանրաքվեից սկսած, հետագա

յուրաքանչյուր 10 տարիների համար, հաշվի առնելով մարդկային, քաղաքական, աշխարհագրական և այլ գործոններ, պատգամավորների այդ թվին կարող է ավելանալ առավելագույնը 20 մարդ:

Ջրադաշտները և հրեաները ընտրում են մեկական պատգամավոր, ասորիները և խաղերը միասին ընտրում են մեկ պատգամավոր, հյուսիսի ու հարավի հայ քրիստոնյաներն ընտրում են մեկական պատգամավոր:

Ընտրատարածքների սահմանները և պատգամավորների թվաքանակը սահմանվում է օրենքով:

Հոդված 65

Ընտրությունների անցկացումից հետո իսլամական խորհրդի Մեջլիսի նիստը կարող է որոշումներ կայացնել՝ պատգամավորների ընդհանուր թվի երկու երրորդի մասնակցության դեպքում:

Օրինագծերը և որոշումներն ընդունվում են համաձայն հաստատված ներքին կանոնակարգի, բացառությամբ այն դեպքերի, երբ Սահմանադրությունը սահմանում է հատուկ քվորում որոշում կայացնելու համար:

Ներքին կանոնակարգը հաստատելու համար անհրաժեշտ է, որ դրան կողմ քվեարկի նիստին

մասնակից պատգամավորների երկու երրորդը:

Հոդված 66

Մեջլիսի նախագահի և նախագահության անդամների ընտրության կարգը, ինչպես նաև հանձնաժողովների քանակը, նրանց գործունեության կարգը, բանակցությունների համապատասխանեցումը և կազմակերպական հարցերը կարգավորվում են ներքին կանոնակարգով:

Հոդված 67

Պատգամավորները Մեջլիսի առաջին նիստում պետք է երդվեն և ստորագրեն ներքոնըշյալ տեքստի տակ:

Հանուն գթասիրտ – բարեգութ Աստծո

«Սուրբ Ղուրանի վրա երդվում եմ Ամենաբարձրյալ և Ամենակարող Աստծո առջև, որ իմ մարդկային արժանապատվությամբ պարտավորվում եմ պաշտպանել իսլամը և Իրանի ժողովրդի Իսլամական հեղափոխության նվաճումները, ինչպես նաև Իսլամական Հանրապետության հիմնադրույթները, լինել այն բանի արդարացի պահապանը, որ մեզ է վստահել ժողովուրդը, լինել ժողովրդի վստահելի ներ-

կայացուցիչը և պարտականությունները կատարել ազնվորեն ու պատվախնդիր, միշտ լինել երկրի անկախությանն ու հզորությանը հավատարիմ, ժողովրդի իրավունքի պաշտպանը և ծառան, պաշտպանել սահմանադրությունն և իմ բանավոր և գրավոր խոսքի մեջ մտածել երկրի անկախության, ժողովրդի ազատության և նրա շահերը բավարարելու մասին»:

Կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչներն այս երդումը տալիս են իրենց Սուրբ գրքի վրա:

Այն պատգամավորները, որոնք բացակայել են Մեջլիսի 1-ին նիստից, պետք է իրենց երդումը տան առաջին իսկ նիստի ժամանակ, որին կմասնակցեն:

Յոթերորդին 68

Պատերազմի և երկրի ռազմական օկուպացիայի ժամանակ նախագահի առաջարկությամբ և պատգամավորների ընդհանուր թվի երեք չորրորդի համաձայնությամբ և Սահմանադրության պահպանության խորհրդի հաստատմամբ ընտրությունները կարող են անորոշ ժամանակով դադարեցվել օկուպացված տարածքներում կամ ամբողջ երկրում: Եթե չի ընտրվում նոր Մեջլիսի կազմ, ապա հին կազմը շարունակում է իր աշխատանքը:

Յոթերորդին 69

Իսլամական խորհրդի մեջլիսում քննարկումները պետք է լինեն դռնբաց, Մեջլիսի նիստի լրիվ հաշվետվությունը համընդհանուր ծանոթության համար պետք է հաղորդվի ռադիոյով և տպագրվի պաշտոնական թերթերում: Արտակարգ իրավիճակներում, երբ դա անհրաժեշտ է երկրի անվտանգության համար, նախագահի, նախարարներից որևէ մեկի, կամ Մեջլիսի 10 պատգամավորների խնդրանքով կարող են անցկացվել դռնփակ նիստեր: Դռնփակ նիստերի որոշումները իրավագործ են միայն այն դեպքում, երբ դրանց աշխատանքներին ներկա է Սահմանադրության պահպանության խորհուրդը և որոշումների ընդունմանը ձայն է տվել պատգամավորների ընդհանուր թվի երեք չորրորդը: Արտակարգ իրավիճակի վերացումից հետո դռնփակ նիստի հաշվետվությունը պետք է տպագրվի և ներկայացվի համընդհանուր ծանոթության համար:

Յոթերորդին 70

Նախագահը, նրա տեղակալները և նախարարները կարող են առանձին կամ միասին մասնակցել Մեջլիսի դռնբաց նիստերին, նրանց կարող են ուղեկցել խորհրդականներ: Պատգամավորների կողմից անհրաժեշտ գըտ-

նըվելու դեպքում, նախարարները պարտավոր են ներկայացնել և երբ նրանք պահանջեն, նրանց արտահայտությունները կլսվեն:

ԲԱԺԻՆ 2.

ԻՍԼԱՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՄԵԶԼԻՍԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 71

Իսլամական խորհրդի մեջլիսը Սահմանադրության շրջանակներում կարող է օրենքներ ընդունել ցանկացած հարցի վերաբերյալ:

Հոդված 72

Իսլամական խորհրդի մեջլիսը չի կարող ընդունել այնպիսի օրենքներ, որոնք հակասում են երկրի պաշտոնական կրոնով սահմանված սկզբունքներին կամ Սահմանադրությանը: Դրա վերաբերյալ որոշումը կայացվում է Սահմանադրության պահպանության խորհրդի կողմից՝ 96-րդ հոդվածի համաձայն:

Հոդված 73

Իսլամական խորհրդի մեջլիսն իրավունք ունի բացատրել և մեկնաբանել սովորական

իրավունքը: Այս հոդվածի դրույթը չի արգելում օրենքների մեկնաբանությունն արդարադատության համակարգի շրջանակներում մեղավորին և անմեղին որոշելու համար:

Հոդված 74

Նախարարների կաբինետի կողմից համաձայնություն ստանալուց հետո օրինագծերն ընդունվում են Մեջլիս: Իսլամական խորհրդի մեջլիսի անդամները ևս նազագոյն 15 պատգամաւորների առաջարկութեամբ կարող են առանձին օրինագիծ քննարկման նյութ դարձնել:

Հոդված 75

Օրինագծերը, ինչպես նաև օրինագծերի մեջ պատգամավորների լրացումներն ու առաջարկները, որոնք հանգեցնում են համընդհանուր եկամուտների կրճատմանը և համընդհանուր ծախսերի ավելացմանը, Մեջլիսի քննարկմանը կարող են ներկայացվել միայն այն ժամանակ, եթե դրանցում նախատեսված են եկամուտների կրճատմանը կամ ծախսերի ավելացմանը ուղղված փոխհատուցումների ուղիները:

Հոդված 76

Իսլամական խորհրդի մեջլիսն իրավունք ունի քննարկելու երկրի բոլոր խնդիրները:

Հոդված 77

Պայմանագրերը, համաձայնագրերը և այլ միջազգային փաստաթղթերը պետք է վավերացվեն Իսլամական խորհրդի Մեջլիսի կողմից:

Հոդված 78

Սահմանների վերանայում չի թույլատրվում, բացի այն դեպքերից, երբ երկրի շահերից ելնելով՝ կատարվում են աննշան մասնակի փոփոխություններ, պայմանով, որ դրանք չեն լինելու միակողմանի և չեն վնասի երկրի տարածքային ամբողջականությանն ու անկախությանը, և որոշումների ընդունմանը ծայն է տվել Իսլամական խորհրդի մեջլիսի պատգամավորների ընդհանուր թվի չորս հինգերորդը:

Հոդված 79

Ուզմական դրություն մտցնելն արգելվում է: Պատերազմի ժամանակ կամ դրան հավասարազոր արտակարգ իրավիճակների դեպքում կառավարությունն իրավունք ունի Մեջլիսի որոշումից հետո մտցնել ժամանակավոր անհրաժեշտ սահմանափակումներ 30 օր ժամկետով: Եթե իրավիճակն այդ ընթացքում չի կարգավորվում, ապա կառավարությունն այն

երկարացնելու թույլատվության համար կրկին դիմում է Մեջլիսին:

Հոդված 80

Կառավարությունը Մեջլիսի թույլատվությամբ կարող է վարկեր տալ և ստանալ, կամ անփոխադարձ օգնություն տրամադրել երկրի ներսում և արտասահմանում:

Հոդված 81

Կտրականապես արգելվում է առևտրի, արդյունբերության, գյուղատնտեսության, լեռնարդյունաբերության և ծառայությունների բնագավառներում կազմակերպություններ և ընկերություններ ստեղծելու նպատակով արտասահմանցիներին արտոնություն տրամադրումը:

Հոդված 82

Կառավարությունն իրավունք չունի վարձել արտասահմանցի փորձագետների, բացի այն անհրաժեշտ դեպքերից, երբ առկա է Իսլամական խորհրդի մեջլիսի համաձայնությունը:

Հոդված 83

Ազգային արժեքավորում ունեցող պետական շինությունները և ունեցվածքը չեն կարող տրվել այլ անձանց, բացի Իսլամական խորհրդի

մեջլիսի համաձայնությամբ տրվածներից, այն էլ այն դեպքում, երբ այդ սեփականություններն իրենցից չեն ներկայացնում հազվագյուտ հուշարձաններ:

Հոդված 84

Յուրաքանչյուր պատգամավոր պատասխանատվություն է կրում ամբողջ ժողովրդի առաջ և իրավունք ունի արտահայտվելու երկրի ներքին և արտաքին քաղաքականության բոլոր խնդիրների շուրջ:

Հոդված 85

Պատգամավորական պաշտոնը պատկանում է կոնկրետ պատգամավորին և չի կարող տրվել ուրիշ որևէ մեկին: Մեջլիսը չի կարող օրինաստեղծ լիազորություններ տալ այլ մարդու, կամ մարդկանց խմբի, սակայն անհրաժեշտ դեպքերում, համաձայն 72-րդ հոդվածի, որոշակի օրենքների նախագծերի պատրաստումը կարող է հանձնարարել իր հանձնաժողովներին: Նման դեպքում այդ օրենքները Մեջլիսում սահմանված ժամկետներում պետք է անցնեն փորձաշրջան, այնուհետև վերջնականապես հաստատվեն Մեջլիսի կողմից:

Բացի դրանից Իսլամական խորհրդի մեջլիսը, 72-րդ հոդվածի համաձայն, կարող է

պետական կամ կիսապետական կազմակերպությունների, ընկերությունների կանոնադրությունների հաստատումը հանձնել համապատասխան հանձնաժողովներին կամ կառավարությանը: Այդ դեպքում կառավարության որոշումները չպետք է հակասեն երկրի հիմնական սկզբունքներին, պաշտոնական կրոնին կամ Սահմանադրությանը, որի վերաբերյալ 96-րդ հոդվածում տրված է Սահմանադրության պահպանության խորհրդի բացատրությունը: Բացի դրանից կառավարության որոշումները չպետք է հակասեն երկրի ընդհանուր օրենքներին և կանոններին: Որպեսզի հնարավոր լինի խուսափել նման անհամապատասխանություններից, դրանք մինչև իրապարակումը և իրականացումը պետք է ներկայացվեն իսլամական խորհրդի Մեջլիսի նախագահին:

Հոդված 86

Մեջլիսի պատգամավորները պատգամավորական լիազորություններն իրականցնելիս միանգամայն ազատ են իրենց տեսակետներն արտահայտելու մեջ, չեն կարող պատասխանատվության կանչվել կամ ձերբակալվել Մեջլիսում արտահայտած տեսակետների, քվեարկության և իրենց պատգամավորական

պարտականություններն իրականացնելու համար:

Չողված 87

Նախարարների կաբինետի ձևավորումից հետո և նախքան նրա աշխատանքներն սկսելը, նախագահը պետք է Մեջլիսից ստանա վճարատախառնի քվե: Իր պարտականություններն իրականացնելիս նա կարող է Մեջլիսից կառավարության համար խնդրել վստահության քվե՝ կարևորագույն և վիճահարույց հարցերի լուծման համար:

Չողված 88

Ամեն անգամ, երբ Իսլամական խորհրդի մեջլիսի անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդը հարցեր ունենա նախագահին, կամ ցանկացած պատգամավոր ցանկանա հարց տալ որևէ նախարարի պարտականությունների վերաբերյալ, նախագահը կամ նախարարը պարտավոր են գալ Մեջլիս և պատասխանել այդ հարցերին, ընդ որում նախագահը պետք է հարցերին պատասխանի առավելագույն մեկ ամսվա, իսկ նախարարը՝ 10 օրվա ընթացքում, բացի այն դեպքերից, երբ այդ ուշացումը Մեջլիսը ձանաչում է հարգելի:

Չողված 89

1) Իսլամական խորհրդի Մեջլիսի պատգամավորները անհրաժեշտության դեպքում կարող են հարցապնդում անել նախարարների կաբինետին կամ առանձին նախարարի, պայմանով, որ հարցապնդումը ստորագրված լինի 10 պատգամավորի կողմից:

Հարցապնդումը ներկայացնելուց հետո 10 օրվա ընթացքում նախարարների կաբինետը կամ համապատասխան նախարարը պետք է այցելեն Մեջլիս, պատասխանեն հարցապնդմանը և ստանան Մեջլիսի վստահության քվե: Եթե նախարարների կաբինետը կամ առանձին նախարարը չգան Մեջլիս, ապա հարցապնդումը ստորագրած պատգամավորները պետք է բացատրություններ տան այդ հարցապնդման վերաբերյալ, և եթե Մեջլիսը նպատակահարմար գտնի, ապա կարող է անվստահություն հայտնել նախարարների կաբինետին կամ համապատասխան նախարարին:

Մեջլիսի անվստահության քվե ստացած նախարարների կաբինետը կամ համապատասխան նախարարը հեռացվում են պաշտոնից: Երկու դեպքում էլ այն նախարարները, որոնց անվստահություն է հայտնվել, չեն կարող դառնալ նոր կառավարության անդամ, որը ձևավորվում է նախորդ կառավարության

պաշտոնաթողությունից հետո:

2) Եթե Իսլամական խորհրդի մեջլիսի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը հարցապնդում կատարեն նախագահին՝ երկրի կառավարման և գործադիր իշխանության գործունեության վերաբերյալ, նախագահը պարտավոր է մեկ ամսվա ընթացքում այցելել Մեջլիս և սպառիչ բացատրություններ տալ բարձրացված խնդիրների վերաբերյալ: Եթե կողմ և դեմ ելույթ ունեցողների, ինչպես նաև նախագահի վերաբերյալ պատասխաններ ընդհանուր թվի երկու երրորդը քվեարկի, որ նախագահը չի համապատասխանում իր զբաղեցրած պաշտոնին, դրա մասին տեղյակ է պահվում երկրի առաջնորդին՝ 110 հոդվածի 10-րդ կետն իրականացնելու համար:

Հոդված 90

Մեջլիսի, գործադիր և դատական իշխանությունների աշխատանքների վերաբերյալ յուրաքանչյուր ոք Իսլամական խորհրդի մեջլիսին կարող է ներկայացնել գրավոր բողոք: Եթե բողոքը գործադիր կամ դատական իշխանությունների վերաբերյալ է, Մեջլիսը պետք է նրանցից սպառիչ պատասխան պահանջի և որոշված ժամկետներում պատասխանի

արդյունքների մասին: Այն, ինչ վերաբերվում է հասարակությանը, պետք է հայտնվի նրան:

Հոդված 91

Իսլամական խորհրդի մեջլիսում ընդունված որոշումների համապատասխանելիությունը իսլամի նորմերի և Սահմանադրության հետ ապահովելու նպատակով ստեղծվում է Սահմանադրության պահապան խորհուրդ՝ հետևյալ կառուցվածքով.

1. Արդար և ժամանակի պահանջներին, ինչպես նաև օրվա խնդիրներին լավատեղյակ 6 կրոնագետ (Ֆաղիհ), որոնց ընտրությունը կատարվում է երկրի Առաջնորդի կողմից:

2. Իրավագիտության տարբեր բնագավառների գծով 6 մահմեդական իրավաբան, որոնք Մեջլիս են ներկայացվում երկրի դատական իշխանության նախագահի կողմից և հաստատվում Մեջլիսում:

Հոդված 92

Պահապան խորհրդի անդամներն ընտրվում են 6 տարի ժամկետով, սակայն առաջին շրջանում, երեք տարի անց, յուրաքանչյուր խմբի անդամների կեսը վիճակահանությամբ փոխվում է: Վերջիններիս փոխարինում են նորանշանակ անդամներ:

Չողված 93

Առանց Պահապան խորհրդի Մեջլիսը զուրկ է օրինական հիմքից, բացառությամբ այն դեպքերի, երբ հաստատում է պատգամավորների լիազորությունները և կատարում Պահապան խորհրդի 6 անդամների ընտրությունը:

Չողված 94

Իսլամական խորհրդի մեջլիսի ընդունած բոլոր որոշումները պետք է հանձնվեն Պահապան խորհրդի քննարկմանը: Պահապան խորհուրդը պարտավոր է փաստաթուղթն ստանալու պահից, առավելագույնը 10 օրվա ընթացքում քննության առնել այն և որոշել դրա համապատասխանությունը իսլամի նորմերին և Սահմանադրությանը: Դրանում հակասություն նկատելու դեպքում Պահապան խորհուրդն այն վերադարձնում է Մեջլիսի վերանայմանը: Հակասություն չլինելու դեպքում որոշումը օրենքի ուժ է ստանում:

Չողված 95

Եթե Պահապան խորհուրդը գտնի, որ 10 օր ժամկետն անբավարար է վերջնական կարծիք հայտնելու համար, կարող է անհրաժեշտ պատճառաբանություններից հետո ևս 10

օր երկարացնել նշված ժամկետը:

Չողված 96

Իսլամական խորհրդի մեջլիսի որոշումների իսլամի նորմերի հետ հակասությունները հայտնաբերելիս վճիռը կայացվում է Պահապան խորհրդի կրոնագետների մեծամասնության կողմից, իսկ Սահմանադրության հետ հակասության մասին վճիռը կայացվում է Պահապան խորհրդի բոլոր անդամների մեծամասնության կողմից:

Չողված 97

Պահապան խորհրդի անդամներն իրենց աշխատանքն արագ կազմակերպելու նպատակով այս կամ այն օրինագծի քննարկման ժամանակ կարող են ներկա գտնվել Մեջլիսում և լսել քննարկումները: Իսկ Մեջլիսում որևէ հրատապ օրինագիծ քննարկվելու ժամանակ, Պահապան խորհրդի անդամները պարտավոր են ներկա գտնվել Մեջլիսի նիստերին և ներկայացնել իրենց տեսակետները:

Չողված 98

Սահմանադրության մեկնաբանումը կատարվում է Պահապան խորհրդի կողմից՝ նրա անդամների 3/4 ձայնով:

Հոդված 99

Պահապան խորհուրդն իր վերահսկողությունն է սահմանում Բանիմացների խորհրդի ընտրությունների, նախագահական ընտրությունների, Իսլամական խորհրդի մեջլիսի պատգամավորների ընտրությունների և հանրաքվեների անցկացման վրա:

ՉԼՈՒԽ 7

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

Հոդված 100

Բնակչության բարեկեցության բարձրացման համար սոցիալական, տնտեսական, բարեկարգման, առողջապահական, մշակութային, կրթական և այլ ծրագրեր ժողովրդի մասնակցությամբ իրականացնելու նպատակով, հաշվի առնելով տեղական պահանջմունքները, յուրաքանչյուր գյուղում, ավանում, քաղաքում, գավառում և նահանգում տեղական բնակավայրի բնակիչների մասնակցությամբ ստեղծվում են համապատասխանաբար գյուղական, ավանային, քաղաքային, գավառային և նահանգային խորհուրդներ:

Այն պահանջները, որոնց պետք է համապատասխանեն թեկնածուները և ընտրողները,

ինչպես նաև նրանց իրավունքներն ու պարտականությունները, համապատասխան խորհուրդների ընտրությունների անցկացման և դրանց վերահսկման հերթականության կարգը պետք է համապատասխանեն ազգային միասնության սկզբունքներին, երկրի ամբողջականության պահպանությանը, Իսլամական հանրապետական համակարգին և ենթակայությունը կենտրոնական կառավարությանը, որը սահմանվում է օրենքով:

Հոդված 101

Հեղինակազրկվելուց խուսափելու նպատակով և նահանգների բարեկարգման ու բարեկեցության բարձրացման նախապատրաստական ծրագրերին մասնակցելու և դրանք համաձայնեցված կերպով իրականացնելու համար ստեղծվում են նահանգների գերագույն խորհուրդներ՝ կազմված նահանգային պատգամավորական խորհուրդների պատգամավորներից:

Այս մարմնի կազմավորումն ու նրա խնդիրները սահմանվում են օրենքով:

Հոդված 102

Նահանգային գերագույն խորհուրդը իր իրավասությունների շրջանակում իրավունք

ունի պատրաստել նախագծեր և դրանք ուղղակի կամ կառավարության կողմից միջնորդավորած՝ ներկայացնել Իսլամական խորհրդի մեջլիս: Մեջլիսը պետք է քննարկի այդ նախագծերը:

Յոդված 103

Նահանգապետերը, գավառապետերը և մյուս տեղական մարմինների ղեկավարները, որոնք նշանակվում են կառավարության կողմից, պարտավոր են խորհուրդների իրավասության շրջանակներում կատարել դրանց որոշումները:

Յոդված 104

Իսլամական արդարությունն ապահովելու նպատակով և արտադրական, արդյունաբերական և գյուղատնտեսական ծրագրերի զարգացման շրջանակներում համագործակցելու համար ստեղծվում են բանվորների, գյուղացիների, ծառայողների և վարչությունների անդամների ներկայացուցիչների խորհուրդներ, իսկ ուսումնական, ծառայողական և այլ հիմնարկություններում՝ դրանց աշխատակիցների ներկայացուցիչների խորհուրդներ:

Յոդված 105

Խորհուրդների որոշումները չպետք է հակասի իսլամական նորմերին և երկրի օրենքներին:

Յոդված 106

Խորհուրդները չի թույլատրվում լուծարել, բացի այն դեպքերից, երբ նրանք շեղվել են իրենց օրինական իրավունքներից: Օրենքը սահմանում է այն մարմինը, որը կարող է որոշել խորհուրդների՝ իրենց իրավասութիւնների շրջանակից շեղումը, ինչպես նաև խորհուրդների լուծարումն ու նոր խորհուրդների կազմավորումը:

Եթե խորհուրդը համաձայն չէ լուծարման որոշման հետ, ապա կարող է այն բողոքարկել դատարանում, որն արտահերթության կարգով պարտավոր է քննել այդ գործը:

**ԵՐԿՐԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ ԿԱՄ ԵՐԿՐԻ
ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ**

Հոդված 107

Համաշխարհային իսլամական հեղափոխության Մեծ առաջնորդ և Իրանի Իսլամական Հանրապետության հիմնադիր Մեծն իմամ Խոմեյնիի մահից հետո (թող նրա հետ լինի Ալլահի ողորմածությունը), որը ժողովրդի բացարձակ մեծամասնության կողմից ճանաչվել էր երկրի առաջնորդ և «մարջալե թաղիիդ», առաջնորդը նշանակվում է համաժողովրդական կարգով ընտրված Բանիմացների խորհրդի կողմից: Նշված բանիմացները խորհրդակցում միմիանց հետ բոլոր ֆաղիի թեկնածուների մասին որոնք համապատասխանում են 5-րդ և 109-րդ հոդվածների պահանջներին: Եթե նրանցից մեկին ճանաչում են որպես մահմեդական իրավունքի խնդիրներով քաղաքական և սոցիալական հարցերով ամենագիտակ, ինչպես նաև գտնում են, որ նա ճանաչված է ամբողջ ժողովրդի կողմից, կամ 109-րդ հոդվածով նշված պահանջների նկատմամբ ունի

առավելություններ, ապա նրան ընտրում են երկրի առաջնորդ: Այլ դեպքերում, ներկայացված ֆաղիհներից մեկին են ընտրում առաջնորդ: Բանիմացների կողմից ընտրված երկրի առաջնորդը համարվում է մահմեդականների առաջնորդ (վելայաթե ամր) և իր վրա է վերցնում դրա հետ կապված ամբողջ պատասխանատվությունը:

Երկրի առաջնորդը երկրի մյուս քաղաքացիների նման հավասար է օրենքի առջև:

Հոդված 108

Բանիմացներին ներկայացվող պահանջները, նրանց թվաքանակը, ընտրության կարգը և ներքին աշխատանքային կանոնակարգը սահմանվում են օրենքով, որը ներկայացնում են 1-ին գումարման Սահմանադրության պահպանության խորհրդի ֆաղիհները, որոնք պետք է ընտրված լինեն ձայների մեծամասնությամբ, որից հետո այդ փաստաթուղթը պետք է հաստատվի երկրի առաջնորդի կողմից: Ղրանից հետո այդ օրենքի ցանկացած փոփոխություն կամ լրացում, կամ բանիմացների պատասխանատվությունների վերաբերյալ այլ կանոնների հաստատումը գտնվում է նրանց սեփական իրավասությունների շրջանակում:

Հոդված 109

Երկրի առաջնորդ ընտրելու պայմանները:

1) Անհրաժեշտ գիտական պատրաստվածություն մահմեդական իրավունքի հարցերով որոշումներ (ֆեթվա) կայացնելու համար:

2) Արդարություն և աստվածասիրություն՝ իսլամական ազգը ղեկավարելու համար:

3) Ճիշտ քաղաքական և սոցիալական աշխարհայացք, բավարար հմտություն, կազմակերպչական ունակություններ և ուժ ղեկավարելու համար:

Եթե գտնվեն մի քանի անձինք, որոնք համապատասխանում են վերը նշված պահանջներին, առաջնությունը տրվում է նրան, ով ավելի լավ է տիրապետում աստվածաբանական և քաղաքական աշխարհայացքին:

Հոդված 110

Երկրի առաջնորդի իրավասություններն ու պարտականությունները.

1) Համակարգի նպատակահարմարությունը որոշող խորհրդի հետ խորհրդակցելուց հետո Իրանի Իսլամական Հանրապետության ընդհանուր պետական քաղաքականության որոշումը:

2) Վերահսկողություն պետության ընդհանուր քաղաքական գծի նկատմամբ:

3) Հանրաքվե անցկացնելու վերաբերյալ որոշում կայացնելը:

4) Զինված ուժերի գլխավոր հրամանատարությունը:

5) Պատերազմ հայտարարելը և զորահավաքի կազմակերպումը:

6) Ներքոհիշյալ անձանց նշանակումը և ազատումը, հրաժարականի ընդունումը.

ա) Սահմանադրության պահպանության խորհրդի ֆալիհների,

բ) Դատական իշխանության ղեկավարի,

գ) Հեռուստատեսության կազմակերպության «Իրանի Իսլամական Հանրապետության ծայն և կերպար» նախագահի,

դ) Միացյալ շտաբի պետի,

ե) Իսլամական հեղափոխության պահպանների կորպուսի գլխավոր հրամանատարի,

զ) Զինված ուժերի և ներքին գործերի գլխավոր հրամանատարների,

7) Իշխանության երեք թևերի միջև ծագած վեճերի և նրանց միջև հարաբերությունների կարգավորումը,

8) Համակարգի նպատակահարմարությունը որոշող խորհրդի օգնությամբ պետության այն դժվարությունների հաղթահարումը, որոնք հնարավոր չէ լուծել սովորական եղանակով,

9) Ժողովրդի կողմից ընտրված երկրի նա-

խագահի նշանակման վերաբերյալ հրամանագրի ստորագրումը (նախագահի թեկնածուների իրավասությունները, համաձայն Սահմանադրության, պետք է հաստատվեն մինչև ընտրությունները, Սահմանադրության պահպան խորհրդի կողմից, իսկ առաջին շրջանի նախագահական ընտրությանը առաջնորդի կողմից:

10) Երկրի շահերից ելնելով՝ նախագահին զերագույն դատարանի կողմից պաշտոնական դիրքի չարաշահման վճռի կամ Իսլամական խորհրդի մեջլիսի կողմից, համաձայն 89-րդ հոդվածի, այդ պաշտոնին նրա համապատասխան չլինելու վերաբերյալ որոշման առկայության դեպքում պաշտոնանկ անելը:

11) Դատական իշխանության ղեկավարի առաջարկով՝ իսլամական նորմերի շրջանակում համաներում կամ պատժի մեղմացման որոշում կայացնելն այն անձանց նկատմամբ, որոնց վերաբերյալ կա դատավճիռ:

Երկրի առաջնորդը կարող է իր որոշ իրավունքներն և պարտականությունները հանձնարարել այլ անձի:

Հոդված 111

Եթե երկրի առաջնորդն ի վիճակի չէ իրականացնել իր օրինական պարտականությունները, կամ կորցրել է 5-րդ և 109-րդ հոդված-

ներում նշված որակական հատկանիշները, նաև եթե հայտնի դառնա, որ նա հենց սկզբից չի բավարարել այդ պահանջներին, նա պաշտոնանկ է արվում:

Այդ մասին որոշումը կայացվում է բանիմացների կողմից՝ համաձայն սահմանադրության 108-րդ հոդվածի:

Առաջնորդի մահվան, կամավոր հեռանալու կամ նրան պաշտոնանկ անելու ժամանակ բանիմացները պարտավոր են հնարավորինս շտապ որոշում կայացնել և ներկայացնել նոր առաջնորդին: Մինչև այդ պահը առաջնորդի բոլոր պարտականությունները ժամանակավորապես տրվում են խորհրդին, որի կազմի մեջ մտնում են երկրի նախագահը, դատական իշխանության ղեկավարը և մեկական ֆաղիհ Սահմանադրության պահպանության խորհրդից որը ընտրում է Համակարգի նպատակահարմարությունը որոշող խորհրդի կողմից: Եթե նշված անձանցից որևէ մեկը ինչ-որ պատճառով ի վիճակի չէ իրականացնել իր պարտականությունները, ապա Համակարգի նպատակահարմարությունը որոշող խորհրդի ընտրությամբ նրա փոխարեն նշանակվում է ուրիշ անձնավորություն, պայմանով, որ ֆաղիհները մեծամասնություն կազմեն:

Նշված խորհուրդը կարող է իրականացնել

110-րդ հոդվածի 1,3,5,10 կետերը, 6-րդ կետի դ), ե), զ) ենթակետերը Համակարգի նպատակահարմարությունը որոշող խորհրդի անդամների երեք չորրորդի կողմից հաստատվելուց հետո:

Եթե երկրի առաջնորդը հիվանդության կամ դժբախտ պատահարի պատճառով ժամանակավորապես չի կարողանում իրականացնել իր պարտականությունները, այդ ամբողջ ընթացքում նրան փոխարինում է սույն հոդվածում նշված խորհուրդը:

Յոդված 112

Համակարգի նպատակահարմարությունը որոշող խորհուրդը կազմավորվում է երկրի առաջնորդի հրահանգով՝ որոշելու նպատակահարմարությունն այն դեպքերում, երբ Սահմանադրության պահպանության խորհուրդը գտնում է, որ Իսլամական խորհրդի մեջլիսի որոշումը չի համապատասխանում շարիաթի նորմերին կամ Սահմանադրությանը, իսկ Մեջլիսը, ելնելով պետական նպատակահարմարությունից, համաձայն չէ Սահմանադրության պահպանության խորհրդի որոշման հետ, ինչպես նաև խորհրդատվությունների անցկացումը այն հարցերի շուրջ որոնք հանձնարարվում են երկրի առաջնորդի կողմից և Սահմանադրությամբ

նշված այլ դեպքերում:

Համակարգի նպատակահարմարությունը որոշող խորհրդի մշտական և ժամանակավոր անդամները նշանակվում են երկրի առաջնորդի կողմից:

Համակարգի նպատակահարմարությունը որոշող խորհուրդի աշխատակարգը կազմվում է և ընդունվում է խորհրդի անդամների կողմից, հաստատվում երկրի առաջնորդի կողմից:

ԳԼՈՒԽ 9

ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1.

ՆԱԽԱԳԱՅԸ ԵՎ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ

Յոդված 113

Երկրի առաջնորդից հետո նախագահը համարվում է երկրի պաշտոնական բարձրատիճան պաշտոնատար անձը: Նա պատասխանատու է ԻԻՀ սահմանադրության կատարման համար և ղեկավարում է գործադիր մարմնի բոլոր ճյուղերը, բացի նրանցից, որոնք անմիջականորեն գտնվում են երկրի առաջնորդի

իրավասության տակ:

Յոդված 114

Նախագահն ընտրվում է չորս տարի ժամկետով՝ ժողովրդի ուղղակի քվեարկության միջոցով, ընդորում անընդմեջ կարող է ընտրվել երկու ժամկետ:

Յոդված 115

Նախագահը պետք է ընտրվի հոգևորական-քաղաքական գործիչներից և համապատասխանի հետևյալ պայմաններին.

Շագունով իրանցի, Իրանի քաղաքացի, կազմակերպական և ղեկավարման ունակություններ, արժանավայել կենսագրություն և աստվածասիրություն, կրոնականություն, հավատ՝ Իսլամական հանրապետության երկրի սկզբունքների նկատմամբ և պատկանելություն պաշտոնական կրոնին:

Յոդված 116

Նախագահի պաշտոնի թեկնածուներն իրենց գրանցման պատրաստ լինելու մասին հայտարարություն են անում ընտրությունները սկսվելուց առաջ: Նախագահի ընտրության կարգը սահմանված է օրենքով:

Յոդված 117

Նախագահը ընտրվում է ընտրողների ձայների բացարձակ մեծամասնությամբ: Եթե ընտրությունների առաջին փուլում թեկնածուներից ոչ ոք չի հավաքել ձայների այդպիսի մեծամասնություն, հաջորդ շաբաթվա ուրբաթ օրն անց է կացվում կրկնակի քվեարկություն: Երկրորդ փուլում մասնակցում են միայն առաջին փուլում ամենաշատ ձայներ ստացած թեկնածուները: Եթե ձայների մեծամասնություն ստացած թեկնածուները իրաժարվում են մասնակցել երկրորդ փուլին, ապա ընտրություններին մասնակցում են հաջորդ երկու թեկնածուները, որոնք առաջին փուլում հավաքած ձայների քանակով առաջ են անցել մյուս թեկնածուներից:

Յոդված 118

ԻԻՀ նախագահի ընտրությունների անցկացման վրա վերահսկողությունը, համաձայն 99-րդ հոդվածի, իրականացնում է Սահմանադրության պահպանության խորհուրդը, սակայն մինչև Սահմանադրության պահպանության առաջին խորհրդի կազմավորումը, այդ պարտականությունները օրենքով սահմանված կարգով կատարվում է հատուկ կյանքի կոչված հսկիչ խորհրդի միջոցով:

Հոդված 119

Նոր նախագահի ընտրությունները պետք է անցկացվեն նախկին նախագահի լիազորությունների ավարտից նվազագույնը մեկ ամիս առաջ: Նոր նախագահի ընտրություններից հետո ընկած ժամանակահատվածում մինչև նախորդի լիազորությունների ավարտը նախագահի պարտականությունները կատարում է նախկինում նախագահը:

Հոդված 120

Եթե քվեարկությունից առաջ 10 օրվա ընթացքում մահանում է նախագահի թեկնածուներից մեկը, որ համաձայն այս սահմանադրության իրավունք ուներ մասնակցելու ընտրություններին, ապա ընտրությունները հետաձգվում են 2 շաբաթով: Եթե նախագահական ընտրությունների առաջին և երկրորդ փուլերի միջև ընկած ժամանակահատվածում մահանում է թեկնածուներից մեկը, որ առաջին փուլում հավաքել է ավելի շատ ձայն, ընտրությունները նույնպես հետաձգվում են երկու շաբաթով:

Հոդված 121

Իսլամական խորհրդի մեջլիսի նիստում, որին մասնակցում են դատական իշխանության

դեկավարը և Սահմանադրության պահպանության խորհրդի անդամները, նորընտիր նախագահը տալիս է հետևյալ երդումը և ստորագրում երդման տեքստի տակ:

Հանուն գթասիրտ և բարեգութ Ասրծո

Որպես նախագահ Սուրբ Դուրանի և Իրանի ժողովրդի առջև երդվում եմ Ամենաբարձրյալին, որ կլինեմ պաշտոնական կրոնի, Իսլամական Հանրապետության կարգերի և երկրի Սահմանադրության պաշտպանը և կներդնեմ իմ ամբողջ կարողություններն ու իրավասությունները՝ ինձ վրա դրված պարտականություններն իրականացնելու համար, ինձ կգոհաբերեմ իմ ժողովրդին և երկրի բարգավաճմանը, կրոնի և բարոյականության տարածման համար, իրավունքների պաշտպանության և արդարության տարածման համար՝ ձեռնպահ մնալով ավտորիտարիզմի բոլոր տեսակի դրսևորումներից, և պաշտպանել ազատությունն ու քաղաքացիների ինքնասիրությունն ու իրավունքները, որ տրված է նրանց Սահմանադրությամբ:

Երդվում եմ, որ կանեմ ամեն ինչ երկրի սահմանների պաշտպանության և երկրի տնտեսական, քաղաքական և մշակութային անկախության ապահովման համար:

Երդվում եմ, ապավինելով Ամենաբարձրյալին, հետևելով Մարգարեի ուղուն և սրբակենցաղ իմամներին (խաղաղությունը թող լինի նրանց հետ), պահպանել ժողովրդի կողմից ինձ վըստահված իշխանությունը՝ այդ սուրբ պարզև և որպես ազնվագույն և նվիրված պահապան՝ հանձնել այն նրան, ում ժողվուրդը կընտրի ինձանից հետո»:

Չողված 122

Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված կարգով՝ իր իրավունքների և պարտականությունների շրջանակում, նախագահը պատասխանատվություն է կրում ժողովրդի, երկրի առաջնորդի և Իսլամական խորհրդի մեջլիսի առջև:

Չողված 123

Նախագահը պարտավոր է օրենքով սահմանված կարգով պրոցեդուրաներն անցնելուց հետո ստորագրել իրեն ներկայացված Մեջլիսի որոշումները, կամ հանրաքվեի արդյունքները, այնուհետև այն իրագործելու համար հանձնել պատասխանատու անձանց:

Չողված 124

Նախագահն օրենքով սահմանված իր

իրավասություններն իրականացնելու համար կարող է ունենալ տեղակալներ:

Առաջին փոխնախագահը, նախագահի հետ համաձայնեցնելով, համադրում է նախարարների կաբինետի և նախագահի մյուս տեղակալների գործունեությունը:

Չողված 125

Նախագահը կամ նրա օրինական ներկայացուցիչը այլ երկրների հետ ստորագրում է իրանական կառավարության պայմանագրերն ու համաձայնագրերը, ինչպես նաև Իսլամական խորհրդի մեջլիսի կողմից վավերացվելուց հետո՝ միջազգային կազմակերպություններին առնչվող պայմանագրերը:

Չողված 126

Նախագահն անմիջականորեն պատասխանատվություն է կրում բյուջեի և պլանի, ինչպես նաև կադրերի ընտրության համար և կարող է դրանց պատասխանատվությունը հանձնել այլ անձի:

Չողված 127

Հատուկ դեպքերում, անհրաժեշտությունից ելնելով, Նախագահը կառավարության կաբինետի վավերացումից հետո, կարող է հատուկ

իրավասություններով նշանակել մեկ, կամ մի քանի ներկայացուցիչներ: Նման դեպքերում նշված ներկայացուցիչի (ներկայացուցիչների) որոշումները իրավական ուժ ունեն ինչպես՝ նախագահի և կաբինետի որոշումներ:

Յոդված 128

Դեսպանները նշանակվում են արտաքին գործերի նախարարի առաջարկությունից հետո և հաստատվում նախագահի կողմից: Նախագահը ստորագրում է ԻԻՀ դեսպանների հավատարմագրերը և ընդունում է այլ երկրների դեսպանների հավատարմագրերը:

Յոդված 129

Նախագահը հանձնում է պետական պարգևներ:

Յոդված 130

Նախագահն իր հրաժարականի դիմումը ներկայացնում է երկրի առաջնորդին և շարունակում է կատարել իր պարտականությունները՝ մինչև հրաժարականն ընդունվելու պահը:

Յոդված 131

Նախագահի մահվան, պաշտոնանկ արվելու, հրաժարական ներկայացնելու, 2 ամիս

բացակայելու, ինչպես նաև հիվանդության կամ նախագահի լիազորությունների ավարտման դեպքում, երբ նոր նախագահը, ինչ-ինչ պատճառներով դեռ չի ընտրվել կամ նմանատիպ այլ դեպքերում՝ Նախագահի 1-ին տեղակալը երկրի առաջնորդի համաձայնությամբ իր վրա է վերցրնում նախագահի պարտականությունները, իսկ Մեջլիսի նախագահի, դատական իշխանության ղեկավարի և 1-ին փոխնախագահի մասնակցությամբ կազմավորված խորհուրդը 50 օրվա ընթացքում պետք է կազմակերպի նոր նախագահի ընտրությունները: Առաջին փոխնախագահի մահվան դեպքում կամ այլ դեպքերում, երբ նա չի կարող իր վրա վերցնել պարտականությունները, կամ նախագահին կից չկա 1-ին փոխնախագահի պաշտոնը, երկրի առաջնորդը նրա փոխարեն նշանակում է այլ անձի:

Յոդված 132

Այն դեպքում, երբ համաձայն 131-րդ հոդվածի 1-ին փոխնախագահը, կամ ուրիշ անձնավորություն, իրականացնում են Նախագահի պարտականությունները, արգելվում է հարցապնդում անել նախարարներին կամ անվտանգության քվե ներկայացնել, ինչպես նաև քայլեր ձեռնարկել Սահմանադրության վերանայման և

հանրաքվե անցկացնելու վերաբերյալ:

Հոդված 133

Նախարարները նշանակվում են Նախագահի կողմից և ներկայացվում են Մեջլիս՝ վճարահարության քվե ստանալու համար: Մեջլիսի կազմի փոփոխության դեպքում նախարարները պարտավոր չեն կրկին վստահության քվե ըստանալ: Օրենքը սահմանում է նախարարների թվաքանակը և նրանցից յուրաքանչյուրի լիազորությունների շրջանակը:

Հոդված 134

Նախագահը ղեկավարում է նախարարների կաբինետը, վերահսկում նրանց գործունեությունը և իր որոշումներով համաձայնեցնում կառավարության և բոլոր նախարարությունների գործունեությունը, ինչպես նաև հստակեցնում է կառավարության աշխատանքային ծրագիրն ու օրենքների կատարումը, նախարարների համագործակցությամբ:

Անհամաձայնությունների առկայության կամ կառավարական մարմինների լիազորությունների խառնվելու դեպքում, երբ անհրաժեշտության չկա օրենքների փոփոխության ենթարկելու և դրանց մեկնաբանելու, Նախագահի կողմից արված առաջարկություններով ընդունված

կառավարության կաբինետի որոշումները, պարտադիր են ի կատար ածելու համար:

Նախագահը նախարարների կաբինետի գործողությունների համար պատասխանատու է Մեջլիսի առջև:

Հոդված 135

Նախարարները մնում են իրենց պաշտոններում մինչև պաշտոնանկ լինելը կամ նրանց նկատմամբ Մեջլիսում անվստահության քվե ներկայացնելը:

Նախարարների կամ ամբողջ կառավարության հրաժարականը ներկայացվում է Նախագահին: Կառավարությունը շարունակում է իր պարտականությունների իրականացումը մինչև նոր կաբինետի նշանակումը:

Նախագահը առավելագույնը մինչև 3 ամիս ժամանակով կարող է նշանակել նախարարության ղեկավարին, որտեղ ժամանակավորապես նախարար չկա:

Հոդված 136

Նախագահը կարող է նախարարներին ազատել պաշտոնից: Այդ դեպքում նա պետք է նոր նախարարի համար վստահության քվե ստանա Մեջլիսից: Եթե Մեջլիսի վստահության քվեն ստանալուց հետո փոփոխության է

ենթարկվում կառավարության անդամների կեսը, ապա նախագահը պետք է դիմի Մեջլիսին՝ կառավարության համար նոր վստահության քվե ստանալու համար:

Յոթերորդ 137

Յուրաքանչյուր նախարար ունի իր հատուկ պարտականությունները, որոնց համար պատասխանատու է Նախագահի և Մեջլիսի առջև: Երբ նախարարի գործունեության ծրագիրը վավերացման է արժանանում նախարարների կաբինետում, ապա նա պատասխանատու է նաև մյուս նախարարների գործունեության համար:

Յոթերորդ 138

Բացի այն, որ նախարարների կաբինետը և առանձին նախարարներ օրենքները կատարելու համար պարտավոր են պատրաստել նորմատիվ փաստաթղթեր, կաբինետն իր լիազորությունների շրջանակում իրավունք ունի կառավարման ֆունկցիաները կատարելու նպատակով ընդունել ադմինիստրատիվ նորմեր, որոշումներ, կանոնագրեր: Յուրաքանչյուր նախարար, նախարարների կաբինետի որոշմամբ, իր լիազորությունների շրջանակում իրավունք ունի կազմել կանոնագրեր, թողարկել

հանձնարարականներ, որոնց բովանդակությունը չպետք է հակադրվի օրենքի ոգուն և տառին:

Կառավարությունը կարող է իր իրավասության տակ գտնվող որոշ հարցերի վավերացումը հանձնել մի քանի նախարարություններից կազմված հանձնաժողովներին: Այդ հանձնաժողովների որոշումները օրենքի շրջագծում, Նախագահի հաստատումից հետո պարտադիր կերպով պետք է ի կատար ածվեն:

Կառավարության որոշումները և կանոնագրերը, ինչպես նաև այս հոդվածում նշված հանձնաժողովների որոշումները գործադրման նպատակով ծանուցանելու հետ միաժամանակ ներկայացվում են Իսլամական խորհրդի մեջլիսի նախագահին ի գիտություն, որը կարող է վերանայման համար ետ ուղարկել նախարարների կաբինետին, եթե դրանց մեջ կան հակասություններ օրենքի հետ:

Յոթերորդ 139

Պետական և հանրային սեփականությանն առնչվող ցանկացած վեճի փոխզիջումը կամ դրանց հանձնումը արբիտրաժի քննարկմանը, կախված է նախարարների կաբինետից և պետք է հայտնվի Մեջլիսին: Եթե պետական դատի մյուս կողմը օտարերկրացի է, ինչպես նաև պե-

տական ներքին կարևոր դատերում կայացված որոշումը պետք է ուղարկվի Մեջլիսի հաստատմանը: Դատի կարևոր լինելը սահմանում է օրենքը:

Յոդված 140

Նախագահի, նրա տեղակալների և նախարարների ընդհանուր իրավախախտումներ և հանցագործությունները մեղադրանքներ ներկայացնելու դեպքում քննարկվում են դատական իշխանության ընդհանուր դատարաններում, դրա մասին տեղյակ պահելով Իսլամական խորհրդի մեջլիսին:

Յոդված 141

Նախագահը, նախագահի տեղակալները, նախարարները և կառավարական ծառայողները չեն կարող ունենալ մեկից ավելի պետական պաշտոն: Նրանք չեն կարող աշխատել մեկ այլ կազմակերպությունում, որի կապիտալը ամբողջությամբ կամ մասնակի պատկանում է պետությանը կամ հասարակական կազմակերպություններին: Նրանք չեն կարող միաժամանակ ընտրվել Իսլամական խորհրդի մեջլիսի պատգամավոր, աշխատել որպես փաստաբան կամ իրավաբանական խորհրդատու, աշխատել որպես գործադիր տնօրեն կամ մասնավոր այլ

կազմակերպությունների տնօրենների խորհրդի անդամ, բացի պետական կոոպերատիվներից: Բացառություն է կազմում ուսումնական և գիտական հիմնարկություններում դասախոսական պաշտոնների զբաղեցումը:

Յոդված 142

Երկրի Առաջնորդի, Նախագահի, նախագահի տեղակալների, նախարարների, ինչպես նաև նրանց կանանց և երեխաների սեփականությունը ստուգվում է դատական իշխանության մարմնի ղեկավարի կողմից, պաշտոնավարելուց առաջ և պաշտոնաթող լինելուց հետո, որպեսզի անօրեն կուտակում կայացած չլինի:

ՄԱՍ 2

ԲԱՆԱԿԸ, ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿՈՐՊՈՒՍԸ

Յոդված 143

Իսլամական Հանրապետության բանակը կոչված է պահպանելու երկրի անկախությունը, տարածքային ամբողջականությունը և իսլամական հանրապետական կարգերը:

Յոդված 144

Իրանի Իսլամական Հանրապետության բանակը պետք է լինի իսլամական, այսինքն՝ կրոնական և ժողովրդական: Բանակում պետք է ծառայության վերցվեն արժանիները, որոնք նվիրված են Իսլամական հեղափոխության նպատակներին և պատրաստ են դրանց համար զոհաբերել իրենց:

Յոդված 145

Ոչ մի արտասահմանցի չի կարող ծառայության անցնել բանակում կամ ներքին զորքերում:

Յոդված 146

Արգելվում է երկրում տեղակայել արտասահմանյան ռազմական որևէ հենակետ՝ նույնիսկ խաղաղ նպատակների համար:

Յոդված 147

Վաղաղ պայմաններում բանակի անձնակազմը կառավարությունը պետք է օգտագործի միայն բանակի տեխնիկական, փրկարարական, ուսումնադաստիարակչական, արտադրական և վերակառուցողական նպատակներով, պահպանելով իսլամական արդարությունն այնպես, որ չվնասվի բանակի պատրաստականությունը:

Յոդված 148

Արգելվում է օգտագործել բանակի հնարավորություններն ու միջոցները, ինչպես նաև անձնակազմին որպես համհարզ, անձնական վարորդ և սեփական այլ նպատակների համար:

Յոդված 149

Ջինվորական կոչում շնորհելը կամ դրանից զրկելը կատարվում է համաձայն օրենքի:

Յոդված 150

Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը, որ ստեղծվել է այս հեղափոխության հաղթանակի առաջին օրերին, իր դերակատարությամբ պահպանում է Իսլամական հեղափոխության նվաճումները:

Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի իրավունքներն ու պարտականությունները, նրա լիազորություններն ու հարաբերությունները, լիազորությունները այլ զինված ուժերի հետ կանոնակարգվում է օրենքով՝ հատուկ շեշտադրումով, նրանց երբայրական համագործակցության և համատեղ գործողությունների հիման վրա:

Յոդված 151

Համաձայն՝ «Եվ պատրաստե՛ք նրանց

համար ինչքան կարող եք ուժեր և հեծյալ ջուկատներ և դուք դրանցով կսարսափեցնեք Ալլահի և ձեր ժողովրդի, թշնամիներին ու դրա հետ մեկտեղ նաև մյուսներին», (սուրահ Ավար, այաթ 60 -ի), կառավարությունը պարտավոր է բոլոր քաղաքացիների համար նախատեսել և իսլամական նորմերին համապատասխան ռազմական պատրաստության պայմաններ ստեղծել, որպեսզի բոլորը կարողանան ի գործ լինել, զինված պաշտպանելու երկիրն ու Իսլամական հանրապետական համակարգը, միևնույն ժամանակ զենք ունենալ կարելի է միայն պաշտոնական մարմինների թույլատրվությամբ:

ԳԼՈՒԽ 10

ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 152

Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին քաղաքականությունը հիմնված է Իրանի վրա կամ Իրանի կողմից ցանկացած տեսակի գերիշխանություն հաստատելու մերժման, բոլոր բնագավառներում անկախության պահպանման, տարածքային ամբողջականության, բոլոր մահմեդականների իրա-

վունքների պաշտպանության և հեգեմոնիստական պետությունների նկատմամբ պարտավորություններ չստանձնելու և Իրանի նկատմամբ թշնամական նկրտումներ չունեցող երկրների հետ խաղաղ փոխհարաբերություններ հաստատելու վրա:

Հոդված 153

Արգելվում է ստորագրել ցանկացած պայմանագիր, որ կհանգեցնի պետության բնական և տնտեսական պաշարների, մշակույթի, բանակի կամ որևէ այլ բնագավառի նկատմամբ արտասահմանյան գերիշխանության:

Հոդված 154

Իրանի Իսլամական Հանրապետությունը իր իդեալն է համարում մարդկային հասարակակարգում մարդու երջանկության հասնելը և անկախությունը, ազատությունը, իրավունքների և արդարության գործադրումը համարում է աշխարհի բոլոր ժողովուրդների իրավունքը: Դրա համար էլ Իրանի Իսլամական Հանրապետությունը ձեռնպահ է մնում խառնվել որևէ երկրի ներքին գործերին, պահպանում է բռնադատածների արդարացի պայքարը կեղեքիչների դեմ:

Յոդված 155

Իրանի Իսլամական Հանրապետության կառավարությունը կարող է քաղաքական ապաստան տալ այն անձանց, որոնք չեն ձանաչվել որպես դավաճաններ և խափանարարներ, ըստ Իրանի օրենքների:

ԳԼՈՒԽ 11

ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Յոդված 156

Դատական իշխանությունն անկախ իշխանություն է, որը պաշտպանում է հասարակական և անձնական իրավունքները և պատասխանատու է արդարության իրականացման համար: Դատական իշխանության պարտականությունները հետևյալն են՝

- 1) Անարդարությունների, չարաշահումների, բողոքների, վեճերի և անհամաձայնությունների, թշնամանքի վերացման և օրենքով նախատեսված այլ գործերի նկատմամբ անհրաժեշտ միջոցառումներ կազմակերպելու վերաբերյալ քննարկում և դատավճռի ներկայացում,
- 2) Հասարակական իրավունքների վերականգնում, արդարության և օրինական ազատու-

թյունների զարգացում,

3) Վերահսկողություն օրենքների ճիշտ կատարման նկատմամբ,

4) Հանցագործությունների բացահայտում, հանցագործների հետապնդում և իրավական ակտերով սահմանված իսլամական քրեական պատիժներ իիրականացում,

5) Անհրաժեշտ միջոցառումների ձեռնարկումով հանցագործությունների կանխում և հանցագործների վերադաստիարակում:

Յոդված 157

Երկրի առաջնորդը դատական իշխանության մարմինների պարտականություններն ի կատար ածելու նպատակով բոլոր դատական, վարչական և գործադիր մարմինների գործունեությունը համադրելու նպատակով 5 տարի ժամկետով նշանակում է դատական գործին քաջածանոթ մոջթախեդ արդարացի և գործունյա դատական իշխանության ղեկավար: Նա համարվում է դատական իշխանության բարձրագույն ղեմքը:

Յոդված 158

Դատական իշխանության ղեկավարի պարտականությունները կայանում են հետևյալում՝

- 1) 156-րդ հոդվածով նախատեսված կարգի համաձայն արդարադատության համակարգում

պատասխանատվության համապատասխան շրջանակներ ունեցող մարմինների ստեղծում,

2) Իվլամական հանրապետության նորմերին համապատասխան դատական որոշումների նախագծերի պատրաստում,

3) Արդարացի և արժանի դատավորների ծառայության ընդունում, նրանց նշանակում ու աշխատանքից ազատում, այլ ծառայության ուղարկում, ծառայողական աստիճանակարգի շնորհումը, բարձր պաշտոնի առաջադրում և օրենքով նախատեսված այլ աղմինիստրատիվ պարտականությունների հանձնարարում:

Յոդված 159

Արդարադատության համակարգը համարվում է պաշտոնական, որտեղ հանձնվում են բողոքներ՝ իրավունքների ոտնահարման և ճնշումների դեպքում: Դատարանների կազմավորումը և նրանց իրավասությունը սահմանվում է օրենքով:

Յոդված 160

Արդարադատության նախարարը պատասխանատվություն է կրում դատական իշխանության փոխհարաբերման բոլոր հարցերում գործադիր և օրենսդիր իշխանությունների հետ: Նա ընտրվում է դատական իշխանության ղեկա-

վարի կողմից Նախագահին ներկայացված թեկնածուներից:

Դատական իշխանության ղեկավարը կարող է արդարադատության նախարարին հանձնարարել բոլոր ֆինանսական, վարչական իրավունքները, ինչպես նաև, բացի դատավորներից, անձնակազմի մյուս անդամներին աշխատանքի ընդունելը: Այդ դեպքում արդարադատության նախարարը կարող է ունենալ այն պարտականություններն ու իրավասությունները, որոնք օրենքով նախատեսված են նախարարների և գործադիր մարմնի բարձրաստիճան պաշտոնյաների համար:

Յոդված 161

Գերագույն դատարանը կազմավորվում է դատական իշխանության ղեկավարի ներկայացրած կանոնակարգով, դատարանների կողմից օրենքների կատարման և դատական իշխանության կողմից միասնական գործունեության և օրենքով սահմանված պարտականությունների իրականացման համար:

Յոդված 162

Գերագույն դատարանի նախագահը և գլխավոր դատախազը դատական գործերը քննելիս պետք է լինեն արդարացի և բանիմաց

մոռթահեղներ:

Դատական իշխանության ղեկավարը գերագույն դատարանի դատավորների հետ խորհրդակցելուց հետո, նրանց նշանակում է այդ պաշտոններին՝ 5 տարի ժամկետով:

Չողված 163

Դատավորին ներկայացված, մահմեդական իրավունքների նորմերին համապատասխան պահանջները սահմանվում են օրենքով:

Չողված 164

Դատավորին չի կարելի ժամանակավոր կամ մշտական ազատել զբաղեցրած պաշտոնից, առանց դատարանի՝ իրավախախտման կամ հանցագործության վերաբերյալ ներկայացրած ապացույցների, որոնք հնարավորություն են տալիս պաշտոնանկ անել: Առանց դատավորի համաձայնության չի կարելի փոխել նրա աշխատանքի վայրը կամ պաշտոնը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա անհրաժեշտ է հասարակությանը՝ դատական իշխանության ղեկավարի որոշումով՝ գերագույն դատարանի նախագահի և գլխավոր դատախազի հետ խորհրդակցելուց հետո:

Դատավորների պարբերական տեղափոխությունները կատարվում են համաձայն

օրենքով սահմանված ընդհանուր կարգի:

Չողված 165

Դատավարություններն ընթանում են բաց և դրանց առանց արգելքների կարող է մասնակցել ցանկացած քաղաքացի, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանի որոշմամբ բաց դատավարությունը կարող է վնաս հասցնել հասարակական բարոյականությանը կամ հասարակական կարգապահությանը, կամ եթե կողմերը խնդրում են, որ դատավարությունը անցկացվի փակ:

Չողված 166

Դատավճիռները պետք է հիմնավորված լինեն օրենքի սկզբունքներով:

Չողված 167

Դատավորը պարտավոր է յուրաքանչյուր գործի համար գտնել օրենքով կողմնորոշված դատավճիռ, եթե նա չի կարողանում դա անել, ապա նա պետք է օգտվի իսլամական հեղինակավոր աղբյուրներից կամ ճանաչում գտած ֆեթվաներից: Դատավորը չի կարող հրաժարվել գործի քննարկումից կամ դատավճռի հրապարակումից՝ տվյալ գործի վերաբերյալ օրենքի բացակայության, օրենքի դրույթների թերի լի-

նելու կամ օրենքի մեջ հակասություններ լինելու պատճառաբանությամբ:

Չոդված 168

Քաղաքական հանցագործությունները և մամուլի հետ կապված հանցագործությունները քննարկվում են բաց՝ երդվյալ ատենակալների մասնակցությամբ:

Երդվյալ ատենակալներին ներկայացվող պահանջները, նրանց ընտրությունը և լիազորությունների շրջանակը, ինչպես նաև քաղաքական հանցագործությունների որակավորումը, սահմանված է օրենքով և իրագործվում է իսլամական նորմերին համապատասխան:

Չոդված 169

Ոչ մի գործունեություն կամ անգործություն չի կարող որակվել որպես օրենքով սահմանված հանցագործություն, եթե այն իրապարակվել է հանցագործությունը կատարելուց հետո:

Չոդված 170

Դատարանների դատավորները պարտավոր են ձեռնպահ մնալ՝ կատարելու կառավարական որոշումները և իրավաբանական ակտերը, որոնք հակասում են օրենքներին և իսլամական սահմանումներին կամ գործադիր

մարմնի կողմից ընդունվել են իրավասությունների վերազանցումով: Ցանկացած ոք կարող է պահանջել՝ արդարացի, վարչական դատարանի կողմից այդ ակտերի չեղյալ հայտարարելը:

Չոդված 171

Եթե որևէ գործի վերաբերյալ դատարանի կամ դատավորի մեղքով կայացված դատավճռի հետևանքով կոնկրետ դեպքում վնաս է հասցրվում, ապա մեղքի առկայության դեպքում, համաձայն իսլամական օրենքների, պատասխանատվությունը կրում է մեղավորը, այլ դեպքերում փոխհատուցումը կատարում է պետությունը: Ամեն դեպքում անիրավացի դատապարտվածը արդարացվում է:

Չոդված 172

Ձինվորականների, ժանդարմերիայի, ոստիկանության, Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի ծառայողների կողմից կատարված ռազմական հանցագործությունները քննելու նպատակով կազմավորվում են ռազմական դատարաններ:

Միևնույն ժամանակ, նշված անձանց կողմից կատարված ընդհանուր քաղաքացիական բնույթի հանցագործությունները և այն հանցանքները որ գործել են արդարության մարմնի

սպաների դիրքում, քննարկվում են ընդհանուր դատարաններում:

Ռազմական դատախազությունը և զինվորական դատարանները համարվում են դատական իշխանության բաղկացուցիչ մաս և նրանց վրա տարածվում են դատական իշխանության բոլոր սկզբունքները:

Հոդված 173

Պաշտոնատար անձանց և կանոնագրերի նկատմամբ բողոքները, հայցերը և զանգատները քննարկելու, քաղաքացիների իրավունքները վերականգնելու համար դատական իշխանության ղեկավարի վերահսկողությամբ կազմավորվում է վարչական արդարության դատարան:

Հոդված 174

Համաձայն դատական իշխանության կողմից վարչական մարմիններում օրինականությունների վերահսկման և գործերի ճիշտ վարույթի՝ իրավունքի, դատական իշխանության ղեկավարին կից կազմավորվում է գլխավոր տեսչություն:

Այդ կազմակերպության իրավասությունները և աշխատակարգը սահմանվում են օրենքով:

ՈԱԴԻՌ-ՅԵՌՈՒՄՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Հոդված 175

Իրանի Իսլամական Հանրապետության հեռուստատեսությունում և ռադիոյում ապահովված է խոսքի ազատությունը, գաղափարների և մտքերի տարածումը՝ պայմանով, որ կպահպանվեն իսլամական նորմերը և երկրի շահերը:

«Իրանի Իսլամական Հանրապետության ծայն և կերպար» կազմակերպության նախագահի նշանակումը և պաշտոնից ազատումը կատարվում է երկրի Առաջնորդի կողմից: Այդ կազմակերպության վերահսկողությունը կատարում է Նախագահի, դատական իշխանության ղեկավարի և Մեջլիսի նախագահի ներկայացուցիչների (երկուական մարդ իշխանության երեք թևերից) մասնակցությամբ կազմված խորհուրդը:

Ուղիղ-հեռուստատեսության կազմակերպության ընդհանուր ղեկավարումը և գործունեության վերահսկումը կատարվում է օրենքով սահմանված կարգով:

**ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ
ԽՈՐՀՈՒՐԴ**

Հոդված 176

Ազգային շահերի ապահովման, Իսլամական հեղափոխության, երկրի տարածքային ամբողջականության և անկախության պահպանության համար ԻԻՀ Նախագահի գլխավորությամբ կազմավորվում է ԻԻՀ Ազգային անվտանգության խորհուրդը՝ հետևյալ պարտականություններով.

1) Երկրի հոգևոր առաջնորդի կողմից ուղենշված ընդհանուր քաղաքականության շրջանակներում ապահովում է երկրի պաշտպանության և անվտանգության քաղաքականությունը:

2) Համադրում է քաղաքական, տեղեկատրվական, սոցիալական, մշակութային և տնտեսական գործունեություններ ի նպաստ երկրի պաշտպանության և ազգային անվտանգության:

3) Երկրին սպառնացող ներքին և արտաքին վտանգների դեպքում երկրի նյութական և մտավոր կարողությունների ներդրումով դիմակայել

դրանց:

Խորհուրդի կազմում ընդգրկված են հետևյալ անձիք՝

-Իշխանության երեք թևերի ղեկավարները

-Զինված ուժերի գլխավոր շտաբի պետը

-Պլանավորման և բյուջեի կազմակերպության նախագահը

-Խորհրդի երկու անդամների նշանակում է երկրի Առաջնորդը

-Արտաքին գործերի, ներքին գործերի և տեղեկատվության նախարարները,

-Անհրաժեշտության դեպքում խորհրդի կազմում կարող են ընդգրկվել նաև, համապատասխան նախարարը, բանակի բարձագույն պաշտոնյան և Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի գլխավոր հրամանատարը:

Ազգային անվտանգության գերագույն խորհուրդն իր պարտականությունների շրջանակում կազմում է երկրի Անվտանգության և Պաշտպանության խորհուրդները: Դրանք գտնվում են երկրի Նախագահի անմիջական իրավասության տակ, կամ նրա որոշմամբ՝ բարձրագույն խորհրդի այլ անդամի:

Հատուկ խորհուրդների իրավասությունների և պարտականությունների շրջանակը կանոնակարգվում է օրենքով, իսկ կառուցվածքը

հաստատվում է գերագույն խորհրդի կողմից:
Բոլոր խորհուրդների որոշումներն ուժի մեջ են մտնում միայն երկրի հոգևոր առաջնորդի հաստատումից հետո:

ԳԼՈՒԽ 14

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ

Յոդված 177

Անհրաժեշտության դեպքում Իրանի Իսլամական Հանրապետության Սահմանադրության վերանայումը կատարվում է հետևյալ կերպ.

Երկրի Առաջնորդը Համակարգի նպատակահարմարությունը որոշող խորհրդի հետ խորհրդակցելուց հետո իր հրամանագրով Նախագահին հանձնարարում է Սահմանադրության վերանայման խորհրդին առաջարկել Սահմանադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարել:

Այդ խորհրդի կազմում ընդգրկված են հետևյալ անձինք՝

- Սահմանադրության պահպանության խորհրդի անդամները,

- Իշխանության երեք թևերի ղեկավարները,

- Համակարգի նպատակահարմարությունը որոշող հանձնաժողովի մշտական անդամները,

- 5 մարդ Բանիմացների խորհրդի կազմից,

- 10 մարդ երկրի առաջնորդի ընտրությամբ,

- 3 մարդ նախարարների կաբինետից,

- 3 մարդ դատական իշխանություններից,

- 10 մարդ Իսլամական խորհրդի մեջլիսի

պատգամավորներից,

- 3 մարդ համալսարանների դասախոսական կազմից:

Խորհրդի կազմի ընտրությունը, աշխատանքային ծրագիրը և նրանց ներկայացվող պահանջները կանոնակարգվում են օրենքով:

Խորհրդի որոշումը երկրի Առաջնորդի հավանությունից և ստորագրումից հետո պետք է ներկայացվի հանրաքվեի: Դրանք օրենքի ուժ են ստանում հանրաքվեի մասնակցածների ձայների բացարձակ մեծամասնությունն ստանալուց հետո:

59-րդ հոդվածի սահմանադրության վերանայման մասը կարող է չպահպանվել:

Փոփոխության չեն կարող ենթարկվել այն հոդվածները որոնք առընչվում են համակարգի իսլամական և կառավարութան հանրապետական բնույթին, այն հոդվածները որոնցում յայտարարում է, որ բոլոր օրենքները և իրավաբանական ակտերը հիմնված են իսլամական նորմերի,

հավատքի հիմքերի և Իրանի Իսլամական
Հանրապետության նպատակների վրա, այն
հողվածները որոնք առընչվում են «վելայաթե
ամր»-ի և ունմայի ղեկավարմանը ինչպես նաև
Իրանի պաշտոնական կրօնի և հասարակական
կարծիքի վրայ հիմնաւծ երկրի կառավարմանը: